

Ֆինանսական հաշվետվություններ Անկախ աուդիտորի եզրակացություն

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2019թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Ձևափոխված կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լիդիան Արմենիա» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» պարբերությունում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 12-ում, Ընկերությունն ունի փոխառություններ կապակցված կողմերից, որոնք ներառում են նաև կապակցված կողմերին վճարվելիք կրդիտորական պարտքերը: Ղեկավարությունն այդ փոխառությունները ֆինանսական հաշվետվություններում դասակարգել է որպես ոչ ընթացիկ: Ընկերության ղեկավարությունը սկզբնապես չի ճանաչել փոխառությունները և կրեդիտորական պարտքերը իրական արժեքով, ինչպես պահանջում է ՖՀՄՍ 9-ը՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*», քանի որ անհնար էր որոշել փոխառությունների և կրեդիտորական պարտքերի մարման հնարավոր օրը և զեղչման տոկոսադրույքը նմանատիպ գործիքների համար: Մենք չենք կարողացել որոշել վերը նշված հարցի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա: Հետևաբար, մենք չենք կարողացել պարզել, թե արդյոք եղել է ֆինանսական հաշվետվությունների ճշգրտման անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝

համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԿ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԿ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Էական անորոշություն կապված Ընկերության անընդհատ գործելու հնարավորության հետ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 1-ին, որտեղ ներկայացված է, որ 2018թ. հունիսի 22-ից ճանապարհների անօրինական շրջափակումներով պայմանավորված շինարարական աշխատանքները դադարեցվել են: Այս իրադարձությունները զգալիորեն սահմանափակել են Ընկերության կապիտալի հասանելիությունը և առաջացրել են այնպիսի պայմաններ, որոնց հետևանքով Ընկերությունը չի կատարել որոշ վարկերի գծով պարտավորությունները հիմնական վարկատուներին, արտադրանքի վաճառքի գծով և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում տրամադրողներին: Արդյունքում Ընկերությունը վերջիններիս հետ կնքել է փոփոխված և վերակնքված տարկետման համաձայնագրեր և Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը կախված է այդ համաձայնագրերի շրջանակներում ֆինանսավորման տրամադրման շարունակությունից: Այս իրադարձություններն ու պայմանները՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված բոլոր հարցերի հետ մեկտեղ, ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն կապված Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հանգամանքի առնչությամբ:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 6-ին և 8-ին, որտեղ ներկայացված է, որ Ընկերությունը հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գծով ունի դեբիտորական պարտքեր պետական բյուջեից՝ 17,261 հազար ԱՄՆ դոլար (2018թ.՝ 23,939 հազար ԱՄՆ դոլար), որը կհաշվանցվի հետագա այլ հարկային պարտավորությունների հետ, կամ ետ կվերադարձվի, երբ Ընկերությունն ունենա իրացումներ կամ ներմուծվող ապրանքների գծով կատարի հետաձգված ԱԱՀ-ի գծով պարտավորության համապատասխան վճարները: Չնայած Ընկերությունը գրանցել է ԱԱՀ գծով դեբիտորական պարտքերը գործող օրենսդրության իր լավագույն մեկնաբանությունների հիման վրա, ապագա արդյունքները կարող են չհամապատասխանել ընթացիկ սպասումներին, քանի որ ՀՀ հարկային մարմինների կողմից հնարավոր են տարաբնույթ մեկնաբանություններ հարկային ստուգումների ընթացքում, և հետևաբար ամբողջ գումարը կարող է վերականգնման ենթակա չլինել: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության

գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի

բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Շնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

4 մարտի 2020թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ԱՄՆ դոլար

	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		2,217	1,095
Սահմանափակ դրամական միջոցներ	5	1,015	1,029
Այլ ընթացիկ ակտիվներ	6	15,212	13,965
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		18,444	16,089
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Մշակման ակտիվներ, հիմնական միջոցներ, զուտ	7	27,857	344,355
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	8	5,167	25,284
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		33,024	369,639
Ընդամենը ակտիվներ		51,468	385,728
Պարտավորություններ			
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	9	670	3,036
Ընթացիկ պարտավորություն հետաձգված ԱԱՀ-ի գծով		13,442	-
Կապակցված կողմերից փոխառություններ, զուտ	12	-	151,501
Արտադրանքի վաճառքի գծով պարտավորություններ և փոխառություններ	10	354,378	297,030
Ածանցյալ պարտավորություններ	11	19,931	30,277
Ընթացիկ պահուստներ	13	1,272	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		389,693	481,844
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Կապակցված կողմերից փոխառություններ, զուտ	12	190,210	47,622
Պահուստներ	13	3,180	8,137
Հետաձգված ԱԱՀ-ի գծով պարտավորություն		723	14,051
Վարձակալության գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մասը	14	67	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		194,180	69,810
Ընդամենը պարտավորություններ		583,873	551,654
<i>Սեփական կապիտալ</i>			
Լրացուցիչ կապիտալ		95	95
Փոխարժեքային տարբերությունների պահուստ		(7,851)	(7,851)
Կուտակված վնաս		(524,649)	(158,170)
Ընդամենը սեփական կապիտալ		(532,405)	(165,926)
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		51,468	385,728

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մարտի 4-ին:

Հայկ Ալոյան
Տնօրեն

Արմեն Մարտիրոսյան
Ֆինանսական տնօրեն



Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունները ներկայացված են 11-ից 48-րդ էջերում:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ԱՄՆ դոլար

		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Տոկոսային եկամուտ		67	145
Ընդամենը եկամուտ		67	145
Շրջափական հետ կապված ծախսեր	16	72,387	39,931
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից օգուտգուտ	11	(10,028)	(8,321)
Մշակման ակտիվների, հիմնական միջոցների արժեզրկում	17	303,954	92,700
Այլ ծախսեր, զուտ	18	233	2,895
Ընդամենը ծախսեր		366,546	127,205
Վնաս մինչև հարկերը		(366,479)	(127,060)
Շահութահարկ	19	-	-
Տարվա վնաս		(366,479)	(127,060)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		(366,479)	(127,060)

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունները ներկայացված են 11-ից 48-րդ էջերում:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ԱՄՆ դոլար

	Լրացուցիչ կապիտալ	Փոխարժեքային տարբերությունների պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95	(7,851)	(31,110)	(38,866)
Տարվա վնաս	-	-	(127,060)	(127,060)
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95	(7,851)	(158,170)	(165,926)
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95	(7,851)	(158,170)	(165,926)
Տարվա վնաս	-	-	(366,479)	(366,479)
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95	(7,851)	(524,649)	(532,405)

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունները ներկայացված են 11-ից 48-րդ էջերում:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ԱՄՆ դոլար

		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա վնաս		(366,479)	(127,060)
<i>Ճշգրտումներ՝</i>			
Տոկոսային և ֆինանսական այլ ծախսեր	10	55,579	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից օգուտ, զուտ	11	(10,028)	(8,321)
Մշակման ակտիվների, հիմնական միջոցների արժեզրկում, զուտ	17	303,954	92,700
Մաշվածություն և ամորտիզացիա		6,221	-
Տոկոսային եկամուտ		(67)	(145)
Այլ		899	139
<i>Շրջանառու կապիտալի փոփոխություններ՝</i>			
Այլ ընթացիկ ակտիվների փոփոխություն		(308)	(10,843)
Հաշվեգրված պարտավորությունների և կրեդիտորական պարտքերի փոփոխություն		(175)	(33,078)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		(10,404)	(86,608)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մշակման ակտիվների, հիմնական միջոցների ձեռքբերում		(670)	(74,173)
Այլ ակտիվների փոփոխություն		16,541	9,195
Ստացված տոկոսային եկամուտ		67	145
Այլ		41	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		15,979	(64,833)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Փոխառություններից մուտքեր		9,074	111,267
Կապակցված ընկերությունների փոխառություններից մուտքեր/(ելքեր), զուտ		(10,145)	28,389
Պարտքի մարում		(3,000)	-
Այլ		(384)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցներ		(4,455)	139,656
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում/(աճ)		1,120	(11,785)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		2	(140)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում		1,095	13,020
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում		2,217	1,095

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունները ներկայացված են 11-ից 48-րդ էջերում:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը («Լիդիան» կամ «Ընկերություն») ստեղծվել է 2005թ. հոկտեմբերի 13-ին: 2006թ. ապրիլի 15-ին Հայաստանի Հանրապետության («ՀՀ») Բնապահպանության Նախարարության կողմից Ընկերությունը ստացել է լիցենզիա՝ Վայոց Ձոր մարզի Ամուլսարի քվարցիտների հետազոտությունների համար: Ընկերությունը 2007թ. մայիս ամսին ստացել է երկու լիցենզիա՝ Ամուլսարի արևելյան և արևմտյան հատվածներում հետազոտությունների իրականացման համար: Ընկերության գրասենյակը գտնվում է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, 7-րդ հարկ հասցեում:

Ընկերության գլխավոր մայր ընկերությունը «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ» ընկերությունն է, որը գտնվում է Չանել Ալյանդս, Սբ. Հելիի Ջերսի ՋԵ2 4ՔԵ, Ֆրանսիս փողոց, 1-ին հարկ Բուրն Հաուս հասցեում և համախմբում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները: «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ» ընկերության բաժնետոմսերը 2008թ. հունվարի 10-ից ցուցակված են Թորոնթոյի Ֆոնդային Բորսայում LYD նշանի ներքո:

2009թ. փետրվարի 20-ին պետական իշխանությունները հաստատել են պահուստները, և Ընկերությունը Կառավարությանն է ներկայացրել իր հանքարդյունահանման աշխատանքների ծրագիրը և ստացել է լիցենզիա հանքարդյունահանման աշխատանքներ կատարելու համար: 2014թ. նոյեմբերի 26-ին Ընկերությունը թարմացրել է հանքարդյունահանման լիզենզիան, որով հանքային պահուստները ավելացել են մինչև 89,376.3 հազար տոննա, իսկ հանքաքարում պարունակվող պահուստները վերաներկայացվել են 73,733 կգ ոսկի և 294.4 տոննա արծաթ: Միաժամանակ, էրատո կոչվող հանքարդյունահանման նոր տարածք է ավելացել հանքարդյունահանման լիցենզիային, որը ներառում է արդյունահանվող 32,941.8 հազար տոննա հանքաքար և պարունակում է 21,069 կգ ոսկի և 83.9 տոննա արծաթ:

2014թ. նոյեմբերին հանքարդյունահանման լիցենզիան երկարաձգվել է մինչև 2034թ. հունվարի 1-ը՝ հիմք ընդունելով տարեկան արտադրությունը մինչև 10 միլիոն տոննա ավելացնելու հանգամանքը՝ աջակցելով շինարարական աշխատանքներն առաջ տանելու Ընկերության մտադրությանը: Ընկերությունը սկսել է հանքի շինարարությունը 2016թ.-ին: 2018թ. հունիսից շինարարական գործողությունները դադարեցվել են, քանի որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը չի դիմել օրենքի գերակայությանը՝ վերացնելու Ամուլսար լեռան տարածքում տեղի ունեցող անօրինական շրջափակումները:

2019թ. դեկտեմբերի 23-ին Ընկերության գլխավոր մայր ընկերությունը՝ «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ», որը զբաղվում է սովորական բաժնետոմսերի առքուվաճառքով Տորոնտոյի ֆոնդային բորսայում (TSX), հայցադիմում է ներկայացրել «Ընկերությունների պարտատերերի հետ հարաբերությունների կարգավորման ակտով» (CCAA) և պաշտպանություն է ստացել Օնտարիոյի Արդարադատության Գերագույն Դատարանի որոշմամբ: Ընդհանուր վերահսկողությունը կիրականցվի CCAA վերահսկիչ նշանակված Ալվարեզ ընդ Մարսալ Քենադա Ինք, (Alvarez & Marsal Canada Inc.) ընկերության կողմից: Հետագայում կասեցվել է «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի սովորական բաժնետոմսերի առքուվաճառքը, և սկսվել է Տորոնտոյի ֆոնդային բորսայի կողմից ցուցակագրման վերանայում: Այս վերանայման արդյունքում 2020թ. փետրվարի 5-ին Տորոնտոյի ֆոնդային բորսան որոշեց ապացուցակել «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի սովորական բաժնետոմսերը: Մինչդեռ CCAA-ի պաշտպանության շրջանակներում

վարկատուները Ընկերության նկատմամբ որևէ պահանջ ներկայացնելու իրավունք չունեն։ Այդուհանդերձ, հնարավոր չէ կանխատեսել «Ընկերությունների պարտատերերի հետ հարաբերությունների կարգավորման ակտով» (CCAA) նախատեսված պաշտպանության հետագա արդյունքը, քանզի առկա է էական անորոշություն Ընկերության՝ անընդհատ գործելու կարողության հետ կապված։

Հայաստանում մշակման գործողություններ իրականացնելիս Ընկերությունը ենթարկվում է որոշակի ռիսկերի, որոնք բնորոշ չեն Կանադայում, Միացյալ Թագավորությունում և Ջերսիում գործող ընկերություններին։ Դրանք ներառում, բայց չեն սահմանափակվում ռիսկերով, ինչպիսիք են՝ զարգացող շուկաներում իրավական, տնտեսական և քաղաքական ոլորտում օրենքի գերակայության չկիրառումը։ Ընկերության գործունեության արդյունքների և հեռանկարների վրա բացասական ազդեցություն են ունեցել և շարունակում են ունենալ քաղաքական և սոցիալական պայմանների փոփոխությունները, ինչպես նաև Լիդիանին բնորոշ անբարենպաստ պետական քաղաքականությունը, հանքարդյունաբերության օրենքներն ու կանոնները, արժույթների փոխարկումը, դրամական միջոցների փոխանցումն արտերկիր, հարկման դրույքաչափերը և մեթոդները և այլ գործոնները։

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատ գործելու սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Ընկերությունը շարունակելու է իր գործունեությունը և կկարողանա իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները իր բնականոն գործունեության ընթացքում։ 2018թ. մայիսին Հայաստանի Հանրապետության Կառավարությունում տեղի ունեցած փոփոխության արդյունքում, ամբողջ երկրում պարբերաբար տեղի էին ունենում ճանապարհային շրջափակումներ և ցույցեր։ 2018թ. հունիսի 22-ից սկսած՝ Ամուլսար լեռան տարածքում տեղի ունեցող անօրինական շրջափակումների արդյունքում շինարարական գործողությունները դադարեցվել են։ Մուտքը դեպի Ամուլսար ընդհանուր առմամբ սահմանափակվել էր աշխատանքների կատարման վայրից կապալառուի անձնակազմի և սարքավորումների դուրս հանման և ձմռան նախապատրաստման գործողություններով 2018թ. չորրորդ եռամսյակի ընթացքում, իսկ ոստիկանության ուղեկցությամբ սահմանափակ հասանելիությունն ապահովվել է մեկ անգամ 2019 թվականի երկրորդ եռամսյակում։

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը օրենքի գերակայությանը չի դիմել Ամուլսար հանքում անօրինական շրջափակումները վերացնելու և Ընկերության դեմ իրականացվող անօրինական գործողությունները դատական կարգով վերացնելու համար։ Ավելին, Հայաստանի Հանրապետության Կառավարությունն իրականացրել է որոշակի քայլեր և ձախողել այլ հարցերի վերաբերյալ գործողություններ կատարել։ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից իրականացված և չիրականացված գործողությունները զգալիորեն սահմանափակել են Ընկերության համար կապիտալի հասանելիությունը և առաջացրել են այնպիսի պայմաններ, որոնց հետևանքով Ընկերությունը չի կատարել որոշ վարկերի գծով պարտավորությունները հիմնական վարկատուներին, ինչպես նաև արտադրանքի վաճառքի գծով և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում տրամադրողներին։ Արդյունքում Ընկերությունը կնքել է փոփոխված և վերակնքված տարկետման համաձայնագիր իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում տրամադրողների հետ, որոնց մասին առավել մանրամասն ներկայացված է ծանոթագրություն 10-ում։ Հիմնական համաձայնագրի, այն է 2019թ. հոկտեմբերի 14-ին կնքված Փոփոխված և վերակնքված տարկետման չորրորդ համաձայնագրի, գործողության ժամկետը լրացել է 2019թ. դեկտեմբերի 20-ին։ 2019թ. դեկտեմբերի 20-ին Ընկերությունը չի կարողացել համաձայնության գալ իր բոլոր վարկատուների հետ տարկետման ժամանակահատվածը երկարաձգելու շուրջ, հետևաբար փոփոխված և վերակնքված տարկետման չորրորդ համաձայնագիրը դադարեց գոյություն ունենալ։ Ընկերության և իր բաժնետերերի շահերն ու ակտիվները պաշտպանելու համար «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ը 2019թ. դեկտեմբերի 23-ին դիմել է CCAA-ի պաշտպանությանը։ Ընկերությունը կգործի դատարանի պաշտպանության ներքո այնքան

Ժամանակ, քանի դեռ գործողության սահմանված ընթացքը հաստատված չէ իր վարկատուների և վերահսկող դատարանի կողմից: Հետագայում կասեցվել է «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ»-ի սովորական բաժնետոմսերի առքուվաճառքը, և սկսվել է Տորոնտոյի ֆոնդային բորսայի կողմից ցուցակագրման վերանայում: Այս վերանայման արդյունքում 2020թ. փետրվարի 5-ին Տորոնտոյի ֆոնդային բորսան որոշեց ապացուցակել «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ»-ի սովորական բաժնետոմսերը: Մինչդեռ CCAA-ի պաշտպանության շրջանակներում վարկատուները Ընկերության նկատմամբ որևէ պահանջ ներկայացնելու իրավունք չունեն: Այդուհանդերձ, հնարավոր չէ կանխատեսել «Ընկերությունների պարտատերերի հետ հարաբերությունների կարգավորման ակտով» (CCAA) նախատեսված պաշտպանության հետագա արդյունքը, քանզի առկա է էական անորոշություն Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորության հետ կապված:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից իրականացված, ինչպես նաև չիրականացված գործողությունների արդյունքում, Ընկերությունը ամբողջությամբ դուրս է գրել Ամուլսարի մշակման ակտիվներում կատարված իր ներդրումների հաշվեկշռային արժեքը: Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ ծանոթագրություն 17:

Ընկերության անընդհատ գործելու կարողությունը կախված է նրանից, թե ինչպես Հայաստանի Հանրապետության Կառավարությունը կլուծի Ընկերության համար առաջացած վեճերը և կդարձնի Ընկերությունը մեկ ամբողջություն: Ընկերության համար նաև անհրաժեշտ կլինի ստանալ լրացուցիչ ֆինանսավորում իր ավագ վարկատուներից կամ այլ պարտատերերից, քանի դեռ չի գտնվել ռազմավարական այլընտրանք, եթե այն կարող է ընդհանրապես գտնվել, կամ աջակցել Ընկերության իրավական այլընտրանքներին: Շրջափակման հետ կապված ծախսերը կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել անօրինական շրջափակումները և Ընկերությանը հասանելի են անսահմանափակ միջոցներ բոլոր նպատակների համար: Եթե Ընկերությունը հնարավորություն ունենա մուտք գործել Ամուլսարի տեղանք, ակնկալվում է, որ լրացուցիչ ժամանակ և ֆինանսավորում կպահանջվի տարածքի վերակառուցման համար, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների հայթայթման համար՝ շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և շրջանառու կապիտալի համալրման նպատակով՝ մինչև գործունեությունից դրական դրամական ներհոսքերի ակնկալումը:

Չկա որևէ հավաստիացում, որ Ընկերությունը կկարողանա իր պարտավորությունները ժամանակին կատարել կամ երբ սահմանված գործողությունները կհաստատվեն ավագ վարկատուների և CCAA դատարանի կողմից: Առկա է էական ռիսկ, որ Ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում տրամադրողների նկատմամբ, ինչն էլ կհանգեցնի մեկ կամ մի քանի ապահովված կողմերի՝ իրենց իրավունքների կիրառման արդյունքում վճարման պահանջի ներկայացման և գրավադրման իրավունքի կիրառման, որը կհանգեցնի Ընկերության ակտիվների՝ մասնակի կամ ամբողջական կորստի: Մինչդեռ CCAA-ի պաշտպանության շրջանակներում, Լիդիանը շարունակում է համագործակցել իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում տրամադրողների հետ՝ փնտրելով շարունակական ֆինանսավորում ռազմավարական, ֆինանսական և իրավական այլընտրանքների համար:

Չնայած նախկինում՝ ողջ 2019թ. ընթացքում Ընկերությունը կարողացել է բավականաչափ ֆինանսավորում ստանալ փոփոխված և վերակնքված տարկետման չորրորդ համաձայնագրով, Փոփոխության տասնհինգերորդ համաձայնագրով և արտադրանքի վաճառքի պայմանագրի շրջանակներում, այնուամենայնիվ, չկա որևէ երաշխիք, որ համապատասխան ֆինանսավորումն անհրաժեշտության դեպքում հասանելի կլինի շուկայական ընդունելի պայմաններով, և Ընկերությունը, ի վերջո, կկարողանա ստեղծել բավարար դրական դրամական հոսքեր իր գործունեությունից, գտնել ընդունելի ռազմավարական այլընտրանք կամ ֆինանսավորել իրավական այլընտրանքը: Այնուամենայնիվ, չկա ապագա զիջման կամ վարկատուների կողմից համապատասխան վարկային համաձայնագրերի շրջանակներում իրենց գումարները հետ չպահանջելու և

գրավադրման իրենց իրավունքները չկիրառելու որևէ երաշխիք: Այս հանգամանքները ցույց են տալիս էական անորոշությունների առկայություն, որոնք զգալի կասկած են առաջացնում կապված Ընկերության պարտավորությունների ժամանակին կատարման, և համապատասխանաբար, Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Այս ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների ճշգրտումները, որոնք անհրաժեշտ կլինեն, եթե Ընկերությունը չկարողանար ձեռք բերել համապատասխան ֆինանսավորում:

2 Պատրաստման հիմքերը, գնահատումների և դատողությունների կիրառում

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից հաստատված մեկնաբանությունների համաձայն: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքով:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ ծանոթագրություն 11-ում ներկայացված որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով: Բոլոր գումարները ներկայացված են հազար ԱՄՆ դոլարով, եթե այլ բան նշված չէ:

2.3 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Աուդիտի ենթարկված այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման և ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի արժեքների վրա: Ղեկավարության կարծիքով, բոլոր ճշգրտումները, որոնք անհրաժեշտ են համարվել ֆինանսական հաշվետվությունների ճիշտ ներկայացման համար, ներառվել են աուդիտի ենթարկված այս ֆինանսական հաշվետվություններում:

2019թ.-ի և 2018թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում տեղի ունեցած որոշ իրադարձություններ և գործողություններ պահանջում էին ղեկավարությունից էական դատողությունների կիրառում կամ գնահատումների օգտագործում, այդ թվում.

Մշակման ակտիվների և այլ երկարաժամկետ ակտիվների վերականգնում

Ղեկավարության կողմից արժեզրկման հայտանիշների վերանայումը ներառել է տեղեկատվության արտաքին և ներքին աղբյուրների դիտարկումը, ներառյալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են շուկան, աշխարհաքաղաքական և տնտեսական պայմանները, մետաղների գները և կանխատեսումները, առևտրային կենսունակությունը, տեխնիկական համապատասխանությունը և թույլատվությունների առկայությունը:

Մշակման ակտիվների արժեզրկման գնահատման համար Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը պահանջում է դատողություն: Այն ներառում է դրամական միջոցների հոսքերի գումարն ու ժամանակը, արտացոլող գնահատականները,

ինչպիսիք են հանքաքարը, հանքաքարում չներառված լրացուցիչ հանքային ռեսուրսները, ոսկու և արծաթի գները, մետաղների վերականգնման դրույքները, կապիտալ ծախսումները, գործառնական ծախսումները, ռոյալթիներն ու հարկերը, ինչպես նաև ապագա դրամական հոսքերի համար կիրառվող գեղջման տոկոսադրույքը: Արժեզրկման գնահատումների իրականացման ժամանակ ղեկավարության կողմից կիրառված նկատառումներից և դատողություններից յուրաքանչյուրը ներկայացնում է գնահատման առանցքային աղբյուրների անորոշություն:

Ֆինանսական գործիքների իրական արժեքներ

Ակտիվ շուկայում չվաճառվող ֆինանսական գործիքների և ածանցյալ գործիքների իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով գնահատման այլընտրանքային հնարքներ:

Ընկերությունը ֆինանսական ածանցյալ գործիքներ առաջացնող մի քանի ֆինանսական պայմանագրեր է կնքել: Այս ածանցյալ գործիքները հաշվառվում են իրական արժեքով և, այնուհետև, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում կատարվում է շուկայական գնի ճշտում: Իրական արժեքի որոշման ժամանակ պահանջվում է ղեկավարության դատողություն գնահատման նպատակով օգտագործվող ֆինանսական մոդելի ելակետային փոփոխականների վերաբերյալ: Այս փոփոխականները ներառում են այնպիսի ելակետային տվյալներ, ինչպիսիք են Լիդիան Ինթերնեյշնլի բաժնետոմսերի գները, բաժնետոմսերի գների փոփոխականությունը, իր երաշխիքների առևտրային ծավալները, առանց դիսկի եկամտաբերության տոկոսադրույքը, վարկային դիսկի պրեմիումը, LIBOR պայմանները և դրա հետ կապված տոկոսադրույքները, այլընտրանքային ֆինանսավորման հասանելիությունը, ոսկու և արծաթի գնի ֆորվարդի կորերը, ոսկու և արծաթի գնի տատանումները, ապագա արտադրանքի ժամկետները, ֆինանսական միջոցների օգտագործման ժամկետները, ֆինանսական միջոցների վերադարձման ժամկետները, ակնկալվող ապագա LIBOR տոկոսադրույքները, կոմերցիոն արտադրանք ստանալու ժամկետները, գործունեությունից դրական դրամական հոսքերի հասանելիությունը և այլ գործոններ: Ղեկավարությունը դատողություն է կիրառում գնահատման մեթոդների բազմազանությունից ընտրություն կատարելու համար և կատարում է ենթադրություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Հանքի փական հետ կապված պարտավորություն

Ընկերության կողմից վերականգնման և հանքի փական հետ կապված պարտավորությունների հաշվարկը հիմնված է հողի վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ծախսումների գնահատումների վրա: Առանցքային ենթադրությունները պարբերաբար վերանայվում և ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն այս գնահատումների հաշվարկման համար օգտագործված ընթացիկ ենթադրությունները: Զգալի դատողություն է անհրաժեշտ հանքավայրի փական և վերականգնման պարտավորությունների պահուստը որոշելու համար, քանի որ առկա են շատ գործարքներ և այլ գործոններ, որոնք կազդեն հանքի վերականգնման համար անհրաժեշտ վերջնական ծախսերի վրա: Գործոնները, որոնք կանդրադառնան այս պարտավորության վրա, ներառում են ապագա մշակման և գործառնական գործունեության, տեխնոլոգիական փոփոխությունների, գնի, գնաճի դրույքների փոփոխություններ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված ակտիվներ ու պարտավորություններ չեն ճանաչվում, քանի դեռ Ընկերությունը համոզված չէ, որ կունենա ապագա շահույթ:

Վարձակալություն

Ընկերության ղեկավարության կողմից վարձակալության պարտավորության վերանայումը ներառում է տեղեկատվության արտաքին և ներքին աղբյուրները, ներառյալ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, ֆիքսված և փոփոխական վարձակալության վճարումները, մնացորդային արժեքի երաշխիքները (եթե այդպիսիք կան), գնման ընտրանքների կատարման գինը, վարձակալության ժամկետի երկարաձգումը և պայմանագրի լուծման համար տույժերը:

Հաշվապահական գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները պարբերաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում որ վերանայումը տեղի է ունենում, եթե այդ վերանայումն ազդում է միայն այդ ժամանակաշրջանի վրա կամ վերանայման ժամանակաշրջանում և ապագա ժամանակաշրջաններում, եթե այդ վերանայումն ազդում է և ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ընդունված հաշվապահական քաղաքականությունը, բացառությամբ հանգամանքների փոփոխության հետ կապված քաղաքականությունների, համապատասխանում է նախորդ ֆինանսական տարվա հաշվապահական քաղաքականությանը:

3.1 Արտարժույթ

Ընկերության գործառնական արժույթը ԱՄՆ դոլարն է, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել պիտանի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

3.2 Դրամական միջոցները և դրանց համարժեքները

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում, բանկերում, 90 օր և պակաս սկզբնական մարման ժամկետով այլ բարձր իրացվելիություն ունեցող կարճաժամկետ գործիքներ:

3.3 Սահմանափակ դրամական միջոցներ

Դրամական միջոցները, որոնց մասով առկա են ընդհանուր նպատակներով անմիջական օգտագործման սահմանափակումներ, չեն ներառվում դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմում: Սահմանափակ դրամական միջոցներն առանձին են ներկայացվում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ՝ կախված դրանց օգտագործման սահմանափակումների ակնկալվող կառուցվածքից:

3.4 Ֆինանսական գործիքներ (ակտիվներ)

Ընկերության ֆինանսական ակտիվները ներառում են՝

- Դրամական միջոցները և դրանց համարժեքները, ինչպես նաև սահմանափակ դրամական միջոցները, որոնք հաշվառվում են իրական արժեքով,
- Դեբիտորական պարտքերը, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները, և
- Ածանցյալ ակտիվները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ փոփոխությունները հաշվառելով շահույթում կամ վնասում:

3.5 Ֆինանսական գործիքներ (պարտավորություններ)

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են՝

- Կրեդիտորական պարտքերը և հաշվեգրված պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, և հետագայում չափվում ամորտիզացված արժեքով:
- Արտադրանքի վաճառքի գծով պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով (հանած գործարքային ծախսերը) և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- Ածանցյալ պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և հետագայում վերաչափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունը դասակարգում է ֆինանսավորման պայմանագրերը՝ հաշվի առնելով դրամական միջոցների հոսքի առանձնահատկությունները, պայմանագրային պայմանները և համապատասխան բիզնես նպատակները: Ֆինանսավորման պայմանագրերը դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություն, երբ պարտավորության ամբողջական կամ զգալի մասը կարող է մարվել կանխիկ եղանակով, և ղեկավարության դատողությամբ այլ նկատառումները համարվում են ոչ բավարար հաշվապահական հաշվառման այլընտրանքային մեթոդի հիմնավորման համար:

Ածանցյալ գործիքները, բացառությամբ սվոպ համարվողներից, սկզբնական ամսաթվին հաշվառվում են իրական արժեքով: Սկզբնական պահին սվոպ ածանցյալ գործիքների իրական արժեքը զրո է, քանի որ համապատասխան փոփոխականների իրացման գինը հավասար կլինի շուկայական գնին: Սկզբնական ամսաթվից հետո բոլոր ածանցյալ գործիքները ճշգրտվում են ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ իրական արժեքով, իսկ ճշգրտված գումարը ներկայումս ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես օգուտ կամ վնաս:

3.6 Ֆինանսավորման ծախսումներ

Պարտքային և սեփական կապիտալի գործիքների գծով կրած ծախսերը գրանցվում են որպես ֆինանսավորման ծախսումներ: Նման ծախսումները ներառում են իրավաբանական և հաշվապահական վճարները, անկախ ճարտարագետների վճարները, տպագրման ծախսերը, ներդրումային բանկիրների կամ գրանցման վճարները, գործակալական վճարները, կազմակերպչական վճարները և նման պարտքային և սեփական կապիտալի գործիքներից առաջացած ածանցյալ գործիքների իրական արժեքը: Ֆինանսավորման մուտքերը ստանալու պահին, դրանց հետ կապված ծախսերը բաշխվում և վերադասակարգվում են համապատասխան ֆինանսական գործիքների դիմաց: Պարտքի հետ կապված ֆինանսավորման ծախսումները ժամանակի ընթացքում ծախսագրվում են որպես տոկոսային ծախս՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, քանի դեռ դրանք չեն կապիտալացվել որակավորվող ակտիվի ինքնարժեքի վրա: Այն դեպքում, երբ ֆինանսավորումը

չի ստացվում կամ անհաջողության է մատնվում, բաշխման ենթակա ֆինանսավորման ծախսումները ծախսագրվում են:

3.7 Փոխհատուցելի ԱԱՀ

Ավելացված արժեքի հարկը («ԱԱՀ») վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ ապրանքների կամ ծառայությունների մատակարարման գծով:

Փոխհատուցելի ԱԱՀ-ն ենթակա է վերադարձման հետագա արտահանվող վաճառքների միջոցով կամ օրենքով նախատեսված որոշ այլ դեպքերում, եթե դրանք ավելի վաղ են կիրառելի: Ընկերություն փոխհատուցելի ԱԱՀ-ն դասակարգում է ընթացիկ ակտիվներում, եթե փոխհատուցման հայտն արդեն ներկայացվել և ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից: Բոլոր մնացած դեպքերում փոխհատուցելի ԱԱՀ-ն ներկայացվում է ոչ ընթացիկ ակտիվներում:

3.8 Հետաձգված ԱԱՀ

Որոշ սարքավորումների ներմուծման ժամանակ առաջացած ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության վճարումը կարող է հետաձգվել մինչև երեք տարի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային կարգավորման: Ներմուծման ժամանակ Ընկերությունը գրանցում է երկարաժամկետ ակտիվ հետաձգված ԱԱՀ-ի գծով և երկարաժամկետ պարտավորություն հետաձգված ԱԱՀ-ի գծով: Հետագայում ԱԱՀ-ի գծով գումարները համարվում են ընթացիկ, եթե գումարը ենթակա է վերականգնման հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում:

3.9 Հետազոտության և գնահատման ակտիվներ

Օգտակար հանածոների հետազոտության և գնահատման ծախսումները ներառում են հետազոտության և գնահատման համար ուղղակիորեն կատարված ծախսումները, ինչպես նաև հանքային լիցենզիաների ստացման համար կատարված ծախսումները: Այս ծախսումները կապիտալացվում են հետազոտության և գնահատման ակտիվների արժեքի վրա՝ լիցենզիաների ձեռքբերումից, նախագծի համապատասխանության ակնկալվող հաստատումից և Ընկերության կողմից հաստատված շինարարական որոշման ձեռքբերումից հետո:

3.10 Մշակման ծախսումներ

Ծախսումները համարվում են մշակման հետ կապված, երբ կատարված աշխատանքն օժանդակում է հանքի հետագա մշակմանը՝ թիվ ԷՆԱյ-43-101-ի համաձայն տեխնիկական հաշվետվություն թողարկելու միջոցով, և երբ այդ մշակման որոշումը հավանության է արժանանում Խորհրդի կողմից: Ի լրումն տնտեսական կենսունակության՝ Խորհուրդը նաև հաշվի է առնում շուկայական ֆինանսավորում ստանալու կարողությունը և ժամանակային և ծախսային սահմանափակումների շրջանակներում Ընկերության գործելու ունակությունը: Ընկերության Ամուլսարի ոսկու նախագիծը համարվում է մշակման ակտիվ, թեև դրա հաշվեկշռային արժեքն ամբողջությամբ արժեզրկվել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տես ծանոթագրություն՝ 18:

Մշակման հետ կապված ծախսումները կապիտալացվում են և ներառում են հանքն արտադրական վիճակի բերելու համար անհրաժեշտ ծախսումները: Մշակման հետ կապված ծախսումները ներառում են.

- հետազոտական ծախսումները, որոնք վերադասակարգվել են մշակման ծախսումներին, երբ տնտեսական վերականգնելիությունն ակնհայտ է և մշակման փուլն արժանացել է Խորհրդի հավանությանը,
- շրջակա միջավայրի գնահատման և թույլտվության ծախսումները,
- հողատարածքի սեփականության իրավունքը ձեռքբերման ծախսումները,
- անավարտ շինարարություն, ներառյալ կապալառուներին տրված կանխավճարները,

- ակտիվի վերականգնման ծախսումները,
- տոկոսային ծախսումները և,
- հանքի մշակման հետ կապված այլ ուղղակի ծախսումները:

Աշխատանքների դադարեցման տևական ժամանակահատվածի ընթացքում կրած ծախսումները ծախսագրվում են առաջացման պահին, այնքան ժամանակ քանի դեռ այդ ծախսումներն ուղղակի օգուտ չեն բերում նախագծի մշակմանը: Երբ ակտիվը հանձնվում է շահագործման, ծախսումները փոխանցվում են հիմնական միջոցներին:

3.11 Վերականգնման և հանքի փական հետ կապված պարտավորություններ

Տեղանքի վերականգնման և հանքի փական հետ կապված ծախսումների գծով պարտավորությունների պահուստները հաշվարկելիս ղեկավարությունն օգտագործում է իր կողմից պարտավորությունը մարելու նպատակով պահանջվող ապագա ծախսումների ներկա արժեքի վերաբերյալ կատարված լավագույն գնահատումը, որն արտացոլում է ապագա ծախսումների, գնաճի, արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների գնահատումները, ինչպես նաև ապագա ծախսումների հետ կապված ռիսկերի ենթադրությունները՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Վերոնշյալ գործոնների փոփոխությունները կարող են հանգեցնել վերականգնման և հանքի փական հետ կապված պահուստի փոփոխության: Հանքի փական հետ կապված պարտականության կատարման անհրաժեշտությունը, ինչն իրենից ներկայացնում է շահագործման դադարեցման և վերականգնման ծախսերի կրում, սովորաբար առաջանում է, երբ հետազոտության, գնահատման կամ մշակման հետևանքով էկոլոգիական խախտում է արձանագրվում: Ծախսերը գնահատվում են հանքի փական նախագծի հիման վրա և ենթակա են պարբերական վերանայման: Հանքի շահագործման դադարեցման և տեղանքի վերականգնման ծախսերը զեղչվում են մինչև ներկա արժեքը, երբ առաջանում են նման ծախսերի կատարման պարտականությունը և կապիտալացվում են նույն ակտիվի արժեքին: Այս գումարները ծախսագրվում են ակտիվի մաշվածության և պահուստի զեղչման հակադարձման արդյունքում:

3.12 Կապիտալացված տոկոս

Տոկոսային ծախսերը կապիտալացվում են այն ակտիվների համար, որոնք նշանակալի ժամանակ են պահանջում իրենց նպատակային օգտագործմանը պատրաստվելու համար՝ ներառյալ Ամուլսարի ոսկու նախագիծը: Կապիտալացումը դադարեցվում է, երբ ակտիվը դառնում է հասանելի ղեկավարության կողմից նախատեսված կերպով օգտագործման համար, կամ, երբ ակտիվի մշակումը կասեցվում է: Կապիտալացված գումարն իրենից ներկայացնում է Ամուլսարի Ոսկու նախագծի կառուցումը ֆինանսավորելու նպատակով օգտագործվող փոխառությունների փոխառության ծախսումները:

3.13 Մշակման ակտիվների արժեզրկում

Ընկերությունն արժեզրկման համար վերանայում և գնահատում է իր մշակման ակտիվների հաշվեկշռային արժեքները, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքները կարող են չվերականգնվել: Նման իրադարձությունների կամ փոփոխությունների բացահայտումը և գնահատման իրականացումը պահանջում է զգալի դատողություն: Բացի այդ, ղեկավարության կողմից գնահատման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բազմաթիվ գործոններ, հատկապես՝ հումքի գները, արտարժույթի փոխարժեքները, հանքային ռեսուրսները,

գործառնական, կապիտալ և վերականգնման ծախսերը, ենթարկվում են ռիսկերի և անորոշությունների, որոնք հետագայում կարող են ազդել համապատասխան ակտիվի հաշվեկշռային արժեքի վերականգնելիության որոշման վրա:

Նման հայտանիշի առկայության դեպքում ակտիվի փոխհատուցվող գումարը գնահատվում է՝ հնարավոր արժեզրկման չափը որոշելու համար: Փոխհատուցվող գումարը վաճառքի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումներ և օգտագործման արժեքից առավելագույնն է: Ընկերության մշակման ակտիվների փոխհատուցվող գումարները որոշելիս, Ընկերությունն օգտագործում է իրական արժեքից հանած վաճառքի ծախսումներ մոտեցումը, այնքան ժամանակ, մինչև կարելի կլինի որոշել օգտագործման արժեքը: Իրական արժեքը որոշվում է որպես ակտիվի վաճառքից ստացված գումար պարզեցված ձեռքի հեռավորության գործարքով՝ կնքված բանիմաց և պատրաստակամ կողմերի միջև: Երբ չկա որևէ պարտադիր վաճառքի պայմանագիր, իրական արժեքից հանած վաճառքի ծախսումների գումարը գնահատվում է որպես ակտիվից ակնկալվող ապագա դրամական հոսքեր՝ զեղչված նախքան հարկերը, սակայն ռոյալթիներից հետո, հանած նմանատիպ գործարքների վրա հիմնված վաճառքի ծախսումների արժեքը: Իրական արժեքի չափման մեջ օգտագործվող ելակետային տվյալները կազմում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակի ելակետային տվյալները: Ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչելիս, Ընկերությունն օգտագործում է զեղչված տոկոսադրույքը, որը մոտավոր կհամընկնի շուկայի մասնակիցների կողմից սահմանված տոկոսադրույքին: Ակնկալվող դրամական հոսքերը հիմնված են ակնկալվող ապագա արտադրության, մետաղների իրացման գների, գործառնական և կապիտալ ծախսումների վրա:

Եթե ակտիվի փոխհատուցվող գումարը փոքր է հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների մակարդակով, որոնք ճանաչվում են որպես ակտիվների ամենափոքր ճանաչելի խումբ և առաջացնում են դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվների դրամական միջոցների ներհոսքերից:

3.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածությունը հիմնված է սկզբնական արժեքի վրա՝ հանած գնահատված մնացորդային արժեքը՝ գծային մեթոդով հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում և շինարարության ընթացքում՝ ճանաչվում է մշակման ակտիվներում, հակառակ դեպքում ծախսագրվում է: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվներն ըստ էության ավարտված են և պատրաստ են իրենց նպատակային օգտագործման համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	- 7-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 3-5 տարի
Գրասենյակային սարքավորումներ	- 3-5 տարի

3.15 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը

կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումներ և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեզրկումից հետո տեղի ունեցող դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձման ամսաթվի դրությամբ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը չգերազանցի ծախսումներ հանած կուտակված մաշվածություն արժեքը, որը կլինե, եթե արժեզրկում ճանաչված չլիներ:

3.16 Շրջափական հետ կապված ծախսեր

Աշխատանքների երկարատև դադարեցման ժամանակահատվածի ընթացքում կրած ծախսումներն ուղղակիորեն վերագրելի չեն հանքն արտադրական վիճակի բերելուն և, հետևաբար, ծախսագրվում են:

3.17 Հարկում

Ընկերությունն ունի նվազագույն հարկվող եկամուտ: Մինչ այն պահը, երբ Ընկերությունը կունենա որոշակիություն ապագա շահույթի նկատմամբ, հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում:

3.18 Սեփական կապիտալ

Բաժնային գործիքը ցանկացած պայմանագիր է, որը մնացորդային բաժին է հավաստում Ընկերության ակտիվների նկատմամբ բոլոր պարտավորությունները նվազեցնելուց հետո:

3.19 Սեզմենտային տեղեկատվություն

Ընկերությունը սահմանել է իր գործառնական սեզմենտները ներքին հաշվետվությունների հիման վրա, որոնք վերանայվում և օգտագործվում են գործադիր ղեկավարության կողմից (համատեղ՝ Գործառնական որոշումներ կայացնող գլխավոր անձ կամ "CODM") գործունեության արդյունքների գնահատման և ռեսուրսների բաշխման որոշման ժամանակ: CODM-ը բիզնեսը դիտարկում է աշխարհագրական տեսանկյունից և գնահատում է աշխարհագրական սեզմենտների գործունեության արդյունավետությունը՝ հիմնվելով շահույթի և վնասի, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների վրա: Այդ միջոցները ներառում են գործառնական ծախսերը, հետազոտման և մշակման ծախսերը, հիմնական միջոցները, ոչ ընթացիկ ակտիվները և ընդհանուր պարտքը, եթե այդպիսիք կան:

Ընկերությունը գործում է Կովկասյան տարածաշրջանում օգտակար հանածոների հետազոտմամբ և մշակմամբ զբաղվող միասնական աշխարհագրական սեզմենտի շրջանակներում: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացվում է CODM-ին ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Քանի որ գործառնությունները ներառում են մեկ սեզմենտ, ֆինանսական հաշվետվություններում բացահայտված գումարները ներկայացնում են նաև սեզմենտի գումարները:

4 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

ՖՀՄՄ 16 «Վարձակալություն»

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ փոփոխված հետընթաց մեթոդի կիրառմամբ և, հետևաբար, չի վերաներկայացրել 2018թ. հաշվետու ժամանակաշրջանի համեմատական ցուցանիշները, ստանդարտի կոնկրետ անցումային դրույթներին համապատասխան: Այսպիսով, նոր «Վարձակալություն» ստանդարտից բխող վերաներկայացումներն ու ճշգրտումները արտացոլվել են 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ընկերությունը վարձակալում է գրասենյակային և պահեստային տարածքներ: Այդ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են երեքից հինգ տարի ֆիքսված ժամկետներով, բայց կարող են ունենալ երկարաձգման տարբերակներ: Վարձակալության պայմանները բանակցվում են անհատական կարգով և պարունակում են մի շարք տարբեր պայմաններ և դրույթներ: Վարձակալության պայմանագրերը չեն պարտադրում Ընկերությանը ոչ մի պարտադիր պայման (կովենանտ), իսկ վարձակալված ակտիվները չեն օգտագործվում որպես փոխառության ապահովման միջոց:

Մինչև 2018թ. ավարտը անշարժ գույքի վարձակալության գծով պայմանագրերը դասակարգվել են որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում կատարված վճարումները ճանաչվել են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ գծային մեթոդով՝ վարձակալության ողջ ժամանակահատվածի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը

ՖՀՄՍ 16 ընդունման ժամանակ Ընկերությունը ճանաչել է վարձակալության գծով պարտավորությունը և ակտիվի «օգտագործման իրավունքը» այն վարձակալությունների գծով, որոնք նախկինում համաձայն ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի դասակարգվել են որպես գործառնական վարձակալություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար տես ծանոթագրություններ 9 և 14:

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

5 Սահմանափակ դրամական միջոցներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ամերիաբանկի վարկային պայմանագրի գծով Ընկերությունն ունեցել է 1.0 միլիոն ԱՄՆ դոլար սահմանափակ դրամական միջոցներ: Այս դրամական միջոցների սահմանափակումը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Ամուլսարի համար ձեռքբերվող սարքավորումների գծով ծախսերը չեն ընդունվել վարկատուի կողմից: Տես ծանոթագրություն 23՝ Ամերիաբանկի վարկային պայմանագրի մի մասը մարելու նպատակով այդ դրամական միջոցների հետագա պահման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

6 Այլ ընթացիկ ակտիվներ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված ԱԱՀ	13,442	187
Կանխավճարներ մատակարարներին և այլ դեբիտորական պարտքեր	454	352
Փոխհատուցվող ԱԱՀ	1,067	9,860
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	173	1,200
Աձանցյալ ակտիվներ	-	2,290
Ավանդներ	8	8
Այլ	68	68
	<u>15,212</u>	<u>13,965</u>

Հետաձգված ԱԱՀ-ն կապված է Հայաստանի հանրապետություն սարքավորումների ներմուծման հետ: Օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս Ընկերությանը հետաձգել վճարումները ներմուծման օրվանից մինչև երեք տարի ժամկետով: Հետաձգված ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքին համարժեք առկա է նաև հաշվանցման ենթակա հետաձգված ԱԱՀ-ի գծով կրեդիտորական պարտք:

Հետաձգված ԱԱՀ-ի գծով ակտիվը կդառնա հաշվանցման ենթակա, երբ համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կճարվի:

Հետաձգված ԱԱՀ-ի գծով պարտավորությունները ենթակա են վճարման մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

Տես ծանոթագրություն 11՝ աձանցյալ ակտիվների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

7 Մշակման ակտիվներ, հիմնական միջոցներ

	Մշակման ակտիվներ	Սարքավորումներ	Օգտագործման իրավունք	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	336,927	17,703	-	354,630
Ավելացում	92,103	-	-	92,103
Օտարում	-	(7)	-	(7)
Ներքին շարժ	(43,243)	43,243	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	385,787	60,939	-	446,726
Ավելացում	52,014	-	294	52,308
Օտարում	(58,585)	(46)	-	(58,631)
Ներքին շարժ	(450)	450	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	378,766	61,343	294	440,403
<i>Կուրակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	3,813	-	3,813
Տարվա հաշվարկ	-	5,859	-	5,859
Արժեզրկում	92,700	-	-	92,700
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(1)	-	(1)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	92,700	9,671	-	102,371
Տարվա հաշվարկ	-	6,101	120	6,221
Արժեզրկում	286,066	17,888	-	303,954
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	378,766	33,660	120	412,546
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	293,087	51,268	-	344,355
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	27,683	174	27,857

Ինչպես նշված է ծանոթագրություն 4-ում, ՖՀՄՍ 16-ի ընդունումից հետո վարձակալության հետ կապված օգտագործման իրավունքով ակտիվները չափվել են 2019թ. հունվարի 1-ի դրությամբ վարձակալության պարտավորության արժեքով՝ ճշտված կանխավճարների և հաշվեգրումների չափով : ՖՀՄՍ 16-ի ընդունման արդյունքում 0,4 միլիոն ԱՄՆ դոլարի չափով օգտագործման իրավունքով ակտիվներ ընդգրկվել են հիմնական միջոցների ավելացումներում, ինչպես ցույց է տրված վերոնշյալ աղյուսակում: Լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 14:

Տես ծանոթագրություն 17՝ մշակման ակտիվների արժեզրկման մանրամասների համար:

8 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտք	723	14,051
Փոխհատուցվող ԱԱՀ	3,096	9,701
Ավանդի վերականգնման սահմանափակումներ	1,348	1,532
	<u>5,167</u>	<u>25,284</u>

Համաձայն հանքարդյունահանման իրավունքի, Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կատարել մասնաբաժնային վճարներ, որպես հետհանքարդյունահանման վերականգնման և պետական վերահսկման երաշխիք: Վերականգնման աշխատանքների գծով այս կանխավճարները կփոխհատուցվեն Ընկերությանը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ընդունի հետհանքարդյունահանման փակման համար կատարված վերականգնման աշխատանքները:

9 Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	474	3,035
Աշխատավարձի հաշվեգրումներ	86	1
Ընթացիկ վարձակալության գծով պարտավորություններ	110	-
	<u>670</u>	<u>3,036</u>

Վարձակալության գծով պարտավորությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես ծանոթագրություն 14:

10 Արտադրանքի վաճառքի գծով պարտավորություններ և փոխառություններ

	Արտադրանքի վաճառքի պարտավորություն	Ժամկետային վարկ	Սարքավորումների ծեռքերման գծով ֆինանսավորում	Ընդամենը
Մնացորդ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	69,407	71,436	47,871	188,714
Փոխառություններից մուտքեր	-	61,896	33,556	95,452
Ֆինանսավորման ծախսումներ	-	(9,296)	(4,962)	(14,258)
Հաշվեգրված տոկոսներ	8,771	11,973	5,210	25,954
Ֆինանսավորման ծախսումների ամորտիզացիա	295	5,357	2,595	8,247
Պարտքի մարում	-	-	(7,079)	(7,079)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	78,473	141,366	77,191	297,030
Փոխառություններից մուտքեր	-	9,074	-	9,074
Ֆինանսավորման ծախսումներ	-	(300)	-	(300)
Հաշվեգրված տոկոսներ	8,872	19,244	7,407	35,523
Ֆինանսավորման ծախսումների ամորտիզացիա	295	11,404	4,352	16,051
Պարտքի մարում	-	-	(3,000)	(3,000)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,640	180,788	85,950	354,378

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որոշ վարկերի գծով Ընկերությունը չի կատարել իր պարտավորությունները, ինչպիսիք են՝ արտադրանքի վաճառքի պայմանագրում, ժամկետային պայմանագրում և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորման պայմանագրում ներառված պայմանները: Այսպիսով, արտադրանքի վաճառքի պայմանագրի գծով պարտավորությունները, պարտքային և դրա հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես ընթացիկ:

Տարկետման համաձայնագիր

Փոփոխված և վերաներկայացված տարկետման չորրորդ համաձայնագիր

Ընկերությունը կնքել է չորս հաջորդական տարկետման համաձայնագրեր իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով մատակարարների և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորողների հետ (ինչպես մանրամասնված է ստորև): Փոփոխված և վերակնքված չորրորդ տարկետման համաձայնագիրը, որը համարվում է հիմնական համաձայնագիր, կնքվել է 2019թ. հոկտեմբերի 14-ին, իսկ գործողության ժամկետը լրացել է 2019թ. դեկտեմբերի 20-ին: 2019թ. դեկտեմբերի 20-ին Ընկերությունը չի կարողացել համաձայնության գալ իր բոլոր վարկատուների հետ տարկետման ժամանակահատվածը

երկարաձգելու շուրջ, այսպիսով փոխատուների պարտավորությունը պահանջը ներել կամ գործի դնել կամ դեֆոլտի որոշակի իրադարձությունների դեպքում յուրաքանչյուր վարկատուի ֆինանսական համաձայնագրի շրջանակներում կիրառել դեֆոլտի դեպքում իրենց վերապահված իրավունքները կամ զիջումները, ավարտվել է: Ընկերության և իր բաժնետերերի շահերն ու ակտիվները պաշտպանելու համար «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ը 2019թ. դեկտեմբերի 23-ին դիմել է CCAA-ի պաշտպանությանը: Ընկերությունը կգործի դատարանի պաշտպանության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ գործողության սահմանված ընթացքը հաստատված չէ իր վարկատուների և վերահսկող դատարանի կողմից: Հետագայում կասեցվել է «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի սովորական բաժնետոմսերի առքուվաճառքը, և սկսվել է Տորոնտոյի ֆոնդային բորսայի կողմից ապացուցական վերանայումը: Այս վերանայման արդյունքում 2020թ. փետրվարի 5-ին Տորոնտոյի ֆոնդային բորսան որոշեց ապացուցակել «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի սովորական բաժնետոմսերը:

2019թ. հոկտեմբերի 14-ին Ընկերությունը կնքել է փոփոխված և վերաներկայացված տարկետման չորրորդ համաձայնագիրը՝ իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով մատակարարների և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորողների հետ, որով վերջիններս համաձայնվել են շարունակել զերծ մնալ վարկատուի ֆինանսավորման պայմանագրի հետ կապված որոշակի գործողություններ կամ միջոցներ կիրառելու իրենց իրավունքից՝ մինչև հետևյալ իրադարձություններից ամենավաղը. ա) մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը, բ) վարկատուի ֆինանսավորման պայմանագրով լրացուցիչ դեֆոլտի դեպքի առաջացումը, կամ գ) Ընկերության կողմից փոփոխված և վերաներկայացված տարկետման չորրորդ համաձայնագրի պայմանների որևէ խախտման դեպքը: Փոփոխված և վերաներկայացված տարկետման չորրորդ համաձայնագրով Լիդիան Արմենիան գործել է կետերով առանձնացված խիստ բյուջեով, որը կենտրոնացած է կոնսերվատիվ պլանի և ակտիվների տնտեսման, արժեքի պահպանման և հանքի տեղանքի վերականգնման և ռազմավարական գործարքի կիրառման վրա:

Ժամկետային վարկ B գծով կանխավճարները ենթակա էին Լիդիանի կողմից որոշակի ռազմավարական այլընտրանքների իրականացմանը:

Փոփոխված և վերաներկայացված տարկետման երրորդ համաձայնագիր

2019թ. հոկտեմբերի 1-ին Ընկերությունը կնքել է փոփոխված և վերաներկայացված տարկետման երրորդ համաձայնագիրը՝ իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով մատակարարների և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորողների հետ, որով նրանք համաձայնվել են շարունակել զերծ մնալ վարկատուի ֆինանսավորման պայմանագրի հետ կապված որոշակի գործողություններ կամ միջոցներ կիրառելու իրենց իրավունքից՝ մինչև հետևյալ իրադարձություններից ամենավաղը. ա) մինչև 2019թ. հոկտեմբերի 11-ը, բ) վարկատուի ֆինանսավորման պայմանագրով լրացուցիչ դեֆոլտի դեպքի առաջացումը, կամ գ) Ընկերության կողմից փոփոխված և վերաներկայացված տարկետման երրորդ համաձայնագրի պայմանների որևէ խախտման դեպքը:

Փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագիր

2019թ. հուլիսի 1-ին Ընկերությունը կնքել է փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագիրը՝ իր հիմնական վարկատուների, արտադրանքի վաճառքի գծով մատակարարների և սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորողների հետ, որով վերջիններս համաձայնվել են շարունակել զերծ մնալ վարկատուի ֆինանսավորման պայմանագրի հետ կապված որոշակի գործողություններ կամ միջոցներ կիրառելու իրենց իրավունքից՝ մինչև հետևյալ իրադարձություններից ամենավաղը. ա) մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը, բ) վարկատուի ֆինանսավորման պայմանագրով լրացուցիչ դեֆոլտի դեպքի առաջացումը, կամ գ) Ընկերության կողմից փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի պայմանների որևէ խախտման դեպքը:

Համաձայն փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի 2019թ. հուլիսի 8-ին Լիդիան Ինթերնեշնլ թողարկել է 23,036,136 երաշխիք ԷյԲի Սվենսկ Էքսպորտկրեդիտի (AB Svensk Exportkredit) համար և 4,746,324 երաշխիք Ամերիաբանկ ՓԲԸ-ի համար (միասին՝ «Տարկետման երաշխիք»), ինչը կազմել է նրա թողարկած և շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի 3.5%՝ 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ: «Տարկետման երաշխիքները» սովորական բաժնետոմսերի գնման երաշխիքներ են, ընդ որում յուրաքանչյուր երաշխիք կիրառելի է Լիդիան Ինթերնեշնլի մեկ սովորական բաժնետոմսի համար: «Տարկետման երաշխիքներ»-ի գործողության ժամկետը կազմում է 5 տարի՝ CAD 0.1495 ԱՄՆ դոլար իրացման գնով, որոնց սեփականատերերը հնարավորություն կստանան իրացնել «Տարկետման երաշխիքներն» անկանխիկ տարբերակով:

Համաձայն փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի Ընկերությունը կատարել է 1,0 մլն ԱՄՆ դոլարի չափով մայր գումարի վճարումներ 2019 թվականի հուլիսի 8-ին և 2,0 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին՝ ՔԵԹ ժամկետային վարկի գծով:

Արտադրանքի վաճառքի գծով պայմանագիր

Արտադրանքի վաճառքի պարտավորության գծով Ընկերությունը պետք է ապահովի զտված ոսկու ընդհանուր արտադրանքի 6.75%, միջինում մինչև 142,454 ունցիա մատակարարման և զտված արծաթի 100% միջինում մինչև 694,549 ունցիա մատակարարման: Մատակարարման պահին Ընկերությանը կվճարվի գործող շուկայական գներից, կամ ոսկու համար՝ 400 դոլար/ունցիա, և արծաթի համար՝ 4 դոլար/ունցիա նվազագույնով, որոնցից յուրաքանչյուրը ենթակա է էսկալացիայի դյույթներին: Համաձայնագրի գործողության ժամկետը ոսկու և արծաթի ընդհանուր մատակարարման կամ 40 տարի ժամկետներից ամենավաղն է: :

Գնման և վաճառքի փոփոխված և վերաներկայացված համաձայնագիր

2019թ. հունվարի 15-ին Ընկերությունը Գնման և վաճառքի փոփոխված և վերաներկայացված համաձայնագիր է կնքել Օսիսկո Բերմուդա Լիմիթիդ (Օսիսկո) և « Ռիզորտս Քափիթալ Ֆանդ» VI Լ.Փ. (ՌՔՖ) (Գնորդներ) հետ: Այս համաձայնագրով փոփոխվում և վերաներկայացվում է 2015թ. նոյեմբերի 30-ին կնքված ոսկու և արծաթի գնման և վաճառքի պայմանագիրը:

Համաձայն Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի՝ Գնորդները երրորդ կանխավճարն անելու հնարավորություն ունեն (Երրորդ կանխավճար)՝ 8.0 միլիոն ԱՄՆ դոլարի չափով՝ ժամկետային վարկ B մարման ժամկետին հաջորդող ժամանակահատվածի ընթացքում (ինչպես նկարագրված է ստորև) կամ մարման ժամկետին հաջորդող 10 աշխատանքային օրվա ավարտից հետո: Երրորդ կանխավճարի գումարը կարող է մասամբ կամ ամբողջությամբ վճարվել՝ կիրառելով Օսիսկո և ՌՔՖ ընկերություններին ժամկետային վարկ B-ի շրջանակներում վճարման ենթակա ցանկացած գումար: Այնուամենայնիվ, Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի շրջանակներում գնորդները հնարավորություն չեն ունենա տրամադրելու Երրորդ կանխավճարն այն դեպքում, եթե ժամկետային վարկ B-ի մարման ժամկետի փոփոխություն է տեղի ունեցել՝ պայմանավորված Լիդիան Արմենիայի կամ Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի շրջանակներում ցանկացած այլ երաշխավորի վերահսկման փոփոխությամբ, և նոր բաժնետերը վերահսկման փոփոխության հետ կապված, գնորդներից գնել է արտադրանքի վաճառքի հետ կապված բոլոր պարտավորությունները:

Եթե տրամադրվի Երրորդ կանխավճարը, Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագիրը կկիրառվի Ամուլսարի օգտակար ծառայության ժամկետի ողջ ընթացքում, հակառակ դեպքում Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի ժամկետը կմնա Արտադրանքի վաճառքի պայմանագրով սահմանված ժամկետը:

Համաձայն Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի Ընկերությունը պետք է վաճառի Գնորդներին, իսկ վերջիններս պետք է ձեռք բերեն Ընկերությունից ոսկու և արծաթի որոշված չափաբաժին: Սահմանվել են հետևյալ պայմանները.

- Ոսկու սահմանված չափաբաժին նշանակում է՝ նախքան Երրորդ կանխավճարի ամսաթիվը, Ամուլսարում արտադրված զտված ոսկու ունեցիաների քանակի 6.75%-ը, և Երրորդ կանխավճարի ամսաթվին հաջորդող օրը (եթե այդպիսին կա)՝ ա) մինչև այն ամսաթիվը, երբ գումարային 165,000 ունցիա զտված ոսկի մատակարարվել է գնորդներին, Ամուլսարում արտադրված զտված ոսկու ունեցիաների քանակը՝ 6.75%,-բ) հետագայում, մինչև այն ամսաթիվը, երբ լրացուցիչ 35,000 ունցիա զտված ոսկի մատակարարվել է գնորդներին, Ամուլսարում արտադրված զտված ոսկու ունեցիաների քանակ 2.70% և գ) հետագայում Ամուլսարում արտադրված զտված ոսկու ունեցիաների քանակը կազմում է 2.3625%:
- Արծաթի սահմանված չափաբաժին նշանակում է նախքան Երրորդ կանխավճարի ամսաթիվը, Ամուլսարում արտադրված զտված արծաթի ունեցիաների քանակի 100%-ը, և Երրորդ կանխավճարի ամսաթվին հաջորդող օրը (եթե այդպիսին կա)՝ ա) մինչև այն ամսաթիվը, երբ գումարային 805,000 ունցիա զտված արծաթ մատակարարվել է գնորդներին, Ամուլսարում արտադրված զտված արծաթի ունեցիաների քանակ՝ 100% բ) հետագայում, մինչև այն ամսաթիվը, երբ լրացուցիչ 190,000 ունցիա զտված արծաթ մատակարարվել է գնորդներին, Ամուլսարում արտադրված զտված արծաթի քանակը 40% և գ) հետագայում Ամուլսարում արտադրված զտված արծաթի ունեցիաների քանակը կազմում է 35%:

Բացի այդ, Երրորդ կանխավճարի տրամադրման դեպքում, «Լիդիան Ինթերնեյշնլ» այլևս չի կարողանա 50%-ով նվազեցնել Ընկերության կողմից մատակարարվող և Լիդիան Արմենիայի կողմից վաճառվող զտված ոսկու և արծաթի արժեքը համաձայն Արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի:

Ժամկետային վարկ

Ժամկետային վարկի գծով պայմանագրով Ընկերությանը տրամադրվել է 160 միլիոն ԱՄՆ դոլար գերակա ապահովման հիմունքներով՝ Ամուլսարի շինարարության նպատակներով: Տոկոսադրույքը հիմնված է 3 ամսվա ԱՄՆ դոլարային LIBOR-ի վրա, բայց ոչ պակաս քան 1%, գումարած 6.5% մարժա (8.5% մարժա տարկետման ժամանակաշրջանի ընթացքում): 2019թ. հունվարին, որպես փոփոխման տասներեքերորդ համաձայնագրի բաղկացուցիչ մաս, ժամկետային վարկի գծով բոլոր չօգտագործված միջոցները և 14 միլիոն ԱՄՆ դոլար գերծախսի վարկային գծի պայմանագիրը չեղարկվեցին և փոխարինվեցին նոր ժամկետային վարկ B-ով: Սակայն տարկետման ժամանակաշրջանն ավարտվել է 2019թ. դեկտեմբերի 20-ին: Տոկոսադրույքների 2% հավելավճարը, որը հակառակ դեպքում պետք է վճարվեր, նույնպես դադարեցվեց: Արդյունքում, 2019 թվականի դեկտեմբերի 21-ին՝ համաձայն անհատական վարկային պայմանագրի պայմանների, Ընկերությունը սկսել է օգտագործել դեֆոլտի հետևյալ տոկոսադրույքները.

- Ժամկետային վարկ՝ LIBOR+ 10%,
- Ժամկետային վարկ B՝ 18.5%.

Վճարումները նախատեսված է կատարել եռամսյակային ժամանակացույցով նախատեսված մասերով և գերազանցող դրամական միջոցների հոսքի 30%-ը՝ մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը մարման ժամկետով:

Փոփոխման տասներեքերորդ համաձայնագիր

2019թ. հունվարի 15-ին Ընկերությունը կնքել է Փոփոխման տասներեքերորդ համաձայնագիրը, համաձայն որի՝ ա) Օսիսկոն հանդես է գալիս որպես վարկատու, բ) ժամկետային վարկի շրջանակներում չկատարված բոլոր պարտավորությունները չեղյալ են հայտարարվել, գ) գերծախսի վարկային գծով բոլոր պարտավորությունները դադարեցվել են և դ) Լիդիան Արմենիայի համար հասանելի է դարձել նոր ժամկետային վարկ B-ն:

Ժամկետային վարկ B կազմում է 18.6 մլն ԱՄՆ դոլար, որը մատչելի է օգտագործման համար մի քանի մասերով մինչև ամենավաղը ա) 2019թ. հունիսի 30-ը, բ) փոփոխված և վերաներկայացված տարկետման համաձայնագրի դադարեցումը, գ) Լիդիան Արմենիայի կամ Լիդիանի վերահսկողության փոփոխման ամսաթիվը (Ժամկետային վարկ B մարման ամսաթիվը):

2018թ. դեկտեմբերին և 2019թ. ընթացքում կանխավճարի տեսքով տրված բոլոր գումարները համարվում են որպես ժամկետային վարկ B-ի շրջանակներում կատարված կանխավճարներ և, համապատասխանաբար, նվազեցվել են ժամկետային վարկ B-ի շրջանակներում առկա հասանելի մնացորդից: Ժամկետային վարկ B-ով նախատեսված հետագա կանխավճարների համար կիրառելի են հետևյալ տոկոսադրույքները. Օրիոն՝ 48,08%, Օսիսկոն՝ 34.37% և ՌՔՖ՝ 17.55%:

Համաձայն փոփոխված և վերաներկայացված տարկետման համաձայնագրի, ժամկետային վարկ B պայմանագրով յուրաքանչյուր կանխավճարի համար գործում է տարեկան 15% գումարած տարկետման ժամանակաշրջանի համար հավելյալ 2% տոկոսադրույքը: Ժամկետային վարկ B-ի դեֆոլտի տոկոսադրույքը կազմում է տարեկան 18.5%:

Փոփոխման տասնչորսերորդ համաձայնագիր

2019թ. հուլիսի 1-ին Ընկերությունը կնքել է Փոփոխման տասնչորսերորդ համաձայնագիրը, որով փոխատուները համաձայնվել են Ընկերության գործող ժամկետային վարկ B շրջանակներում երկարացնել հասանելիության ժամանակահատվածը և մարման ժամկետը մինչև ամենավաղը ա) 2019թ. սեպտեմբերի 30-ը, բ) փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը և գ) վերահսկողության փոփոխության ամսաթիվը:

Փոփոխման տասնհինգերորդ համաձայնագիր

2019թ. հոկտեմբերի 1-ին Ընկերությունը կնքել է փոփոխման տասնհինգերորդ համաձայնագիրը, որով փոխատուները համաձայնվել են Ընկերության գործող ժամկետային վարկ B շրջանակներում երկարացնել հասանելիության ժամանակահատվածը և մարման ժամկետը մինչև ամենավաղը ա) 2019թ. դեկտեմբերի 20-ը, բ) փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը և գ) վերահսկողության փոփոխության ամսաթիվը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային վարկի և ժամկետային վարկ B գծով ստացվել է ընդհանուր 152.0 միլիոն ԱՄՆ դոլար:

Սարքավորումների ձեռքբերման գծով ֆինանսավորում

Ընկերությունն «Ամուլսար Ոսկու Հանքի» Ծրագրի հետ կապված սարքավորումների ձեռքբերման գծով կնքել է գրավով ապահովված երեք վարկային պայմանագիր: Այս ժամկետային պայմանագրերով նախատեսված փոխառությունների առավելագույն միջին գումարը սահմանափակվում է մինչև 90 միլիոն ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր ժամկետային պայմանագրի ամփոփ նկարագիր ներկայացված է ստորև.

- Ամերիաբանկի ժամկետային վարկի առավելագույն մայր գումարը կազմում է 24 միլիոն ԱՄՆ դոլար և պետք է ապահովվի որոշակի սարքավորումներով: Տոկոսադրույքի

հաշվարկը հիմնված է LIBOR+ 8.75% (10.75% տարկետման ժամանակաշրջանում): Տոկոսադրույքներն ու մայր գումարի գծով բոլոր նախատեսվող վճարները հետաձգվել են համաձայն տարկետման համաձայնագրի: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրի գծով օգտագործվել է 10 միլիոն ԱՄՆ դոլար: 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում մայր գումարի և տոկոսագումարների գծով մարումներ չեն իրականացվել: 2019 թվականի հուլիսի 1-ից Ամերիաբանկի ժամկետային վարկի շրջանակներում որևէ լրացուցիչ գումար նախատեսված չէ, իսկ չօգտագործված մասի գծով 2% միջնորդավճարը չեղարկվել է: 2020թ. հունվարի 8-ի դրությամբ 2% տարկետման պրեմիումը դադարեցվել է և ուժի մեջ է մտել դեֆոլտի տոկոսադրույքը՝ LIBOR+12.25%.

- **ՔԱԹ (CAT)** ժամկետային վարկի առավելագույն մայր գումարը կազմում է 42 միլիոն ԱՄՆ դոլար և պետք է ապահովվի որոշակի շարժական հանքարդյունահանման սարքավորումներով: Տոկոսադրույքի հաշվարկը հիմնված է LIBOR+ 4.5% (6.5% տարկետման ժամանակաշրջանում, որն ավարտվել է 2019թ. դեկտեմբերի 20-ին) և առկա է 1.5% միջնորդավճար յուրաքանչյուր չօգտագործված մասի գծով: Յուրաքանչյուր կանխավճար ենթակա է մարման 72 ամսվա ընթացքում, ներառյալ վեցամսյա սկզբնական մարման արտոնյալ ժամանակաշրջանը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրի գծով օգտագործվել է 28.4 միլիոն ԱՄՆ դոլար: 3.0 միլիոն ԱՄՆ դոլարի մայր գումարի գծով վճարները մարվել են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում: Ոչ մի այլ լրացուցիչ ֆինանսական միջոց չի կարող օգտագործվել (CAT) ժամկետային վարկի գծով, քանի որ հասանելիության ժամկետը լրացել է: 2019թ. դեկտեմբերի 21-ին Ընկերությունը սկսել է կիրառել դեֆոլտի տոկոսադրույքը՝ LIBOR+6.5%.
- **ԻՆԳ (ING)** ժամկետային վարկի առավելագույն մայր գումարը կազմում է 50 միլիոն ԱՄՆ դոլար և պետք է ապահովվի նյութերի մշակման և էլեկտրական սարքավորումներով: Տոկոսադրույքի հաշվարկը հիմնված է LIBOR+ 2.95% (4.95% տարկետման ժամանակաշրջանում որն ավարտվել է 2019թ. դեկտեմբերի 20-ին): Մայր գումարի և տոկոսագումարների գծով վճարումները դադարեցվել են համաձայն տարկետման համաձայնագրի: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրի գծով օգտագործվել է 48.0 միլիոն ԱՄՆ դոլար: 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում մայր գումարի և տոկոսագումարների գծով մարումներ չեն իրականացվել: Ոչ մի այլ լրացուցիչ ֆինանսական միջոց չի կարող օգտագործվել (CAT) ժամկետային վարկի գծով, քանի որ հասանելիության ժամկետը լրացել է: 2019թ. դեկտեմբերի 21-ին Ընկերությունը սկսել է կիրառել դեֆոլտի տոկոսադրույքը՝ LIBOR+4.95%.

11 Ածանցյալ պարտավորություններ

Ընկերությունը ճանաչել է ծանոթագրություն 10-ում նկարագրված ֆինանսավորման պայմանագրերի հետ կապված որոշ ֆինանսական գործիքներ, ներառյալ արտադրանքի վաճառքի պայմանագրի գծով կանխավճարը, արտադրանքի վաճառքի պարտավորությունը և ածանցյալ գործիքները: Ֆինանսական գործիքների դասակարգումը հաջորդում է ֆինանսական համաձայնագրերին: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվել են որպես ընթացիկ: Այս ֆինանսական գործիքներից ոչ մեկն առևտրային նպատակով չի պահվում, և Ընկերությունը ներկայումս հեջավորման մեջ ներգրավված չէ:

Ստորև աղյուսակում ներկայացված են ֆինանսական գործիքների իրական արժեքների հիերարխիայի մակարդակները և համապատասխան ժամանակահատվածում ճանաչված շահույթը և վնասը:

Ածանցյալ Ակտիվներ (Պարտավորություններ)

	Արտադրանքի վաճառքի կանխավճարի օպցիոն	Վաճառքի պայմանագրի աժանցյալ գործիք	Արտադրանքի վաճառքի հետ կապված մարում	Երաշխիք	Օգուտ (Վնաս)
Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ ¹	3	3	3	2	
Իրական արժեք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,789	(27,028)	(12,069)	-	
Իրական արժեքի փոփոխություն	(499)	5,052	3,769	-	8,322
Իրական արժեք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,290	(21,976)	(8,300)	-	
Իրական արժեքը թողարկման ժամանակ	-	-	-	(1,973)	
Իրական արժեքի փոփոխություն	(2,290)	11,840	(1,495)	1,973	10,028
Իրական արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(10,136)	(9,795)	-	

Իրական արժեքի ազդեցությունը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի
դրությամբ

10% աճ ոսկու գնի մեջ ²	N/A	\$(1,014)	\$(5,178)	N/A	\$(6,192)
10% աճ արծաթի գնի մեջ ²	N/A	N/A	\$(605)	N/A	\$(605)
10% աճ 3-ամսյա LIBOR տոկոսադրույքի մեջ ²	N/A	\$16	\$319	N/A	\$335

¹Իրական արժեքի հիերարխիայի մակարդակները սահմանվում են հետևյալ կերպ:

1-ին մակարդակ - Ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվների և պարտավորությունների համար
չճշգրտված գնանշվող գներ,

2-րդ մակարդակ- Ելակետային տվյալներ, որոնք տարբերվում են գնանշվող գներից՝ կարող են
դիտվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն,

3-րդ մակարդակ- Ելակետային տվյալներ, որոնք հիմնված են շուկայական ոչ դիտարկելի
տվյալների վրա:

²Վերոնշյալ ազդեցություններն արտացոլում են նշված փոփոխականների ազդեցությունն
ակտիվի և պարտավորության արդյունքի արժեքի աճի վրա: Նշված փոփոխականների
նվազման դեպքում տեղի կունենար հակառակ երևույթը:

իրական արժեքի գնահատումներ

1-ին մակարդակի իրական արժեքի գնահատում- Պարտավորության իրական արժեքը և հաշվեկշռային արժեքը նույնն են բոլոր հաշվետու ժամանակաշրջանների համար:

2-րդ մակարդակի իրական արժեքի գնահատում- Երաշխիքների իրական արժեքը գնահատվել է օգտագործելով 2 մակարդակի չափանիշները: Փոփոխված և վերաներկայացված տարկետման երկրորդ համաձայնագրի շրջանակներում թողարկված երաշխիքները չեն համարվում առևտրային գործիքներ, ուստի գնագոյացման մոդելի օգտագործումը նպատակահարմար է համարվել:

Երաշխիքների իրական արժեքները հաշվարկվում են հետևյալ ելակետային տվյալներով՝

	Տարկետում- Երաշխիքներ	
	2019թ. դեկտեմբերի 31	2019թ. հուլիսի 8
Երաշխիքների մնացորդներ	27,782,460	27,782,460
Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետը	4.52	5.00
Ակնկալվող տատանումներ՝ բաժնետոմսերի գինը	86.8%	80.8%
CAD մեկ բաժնետոմսի արժեքը գնահատման ամսաթվի դրությամբ	-	0.15
CAD Կատարման գին	0.15	0.15
CAD Ոչ ռիսկային տոկոսադրույք	1.70%	1.41%
CAD/ դոլարի փոխարժեքը	-	0.7639
Ակնկալվող շահաբաժին մեկ բաժնետոմսի համար	զրո	զրո

3-րդ մակարդակի իրական արժեքի գնահատում

Աճանցյալ գործիքների իրական արժեքը, բացառությամբ երաշխիքների, չափվել են՝ օգտագործելով 3-րդ մակարդակի չափանիշները: Այս գնահատումների նկատմամբ կիրառված ֆինանսական մոդելավորման տեխնիկան ավելի բարդ է, պահանջում է լրացուցիչ ելակետային տվյալներ, ինչպիսիք են օրինակ ապագա գնահատված արտադրությունը, ոսկու և արծաթի վերարտադրված գները և ելակետային այլ տվյալներ, որոնք հիմնված են շուկայական ոչ դիտարկելի տվյալների վրա: 3-րդ մակարդակի իրական արժեքի հիմնական գնահատումների ելակետային տվյալները ներառել են.

	2019թ. դեկտեմբերի 31	2018թ. դեկտեմբերի 31
Մեկ ունցիայի դիմաց ոսկու սպուտային գին	1,520	1,278
Մեկ ունցիայի դիմաց արծաթի սպուտային գին	18	15
Ոսկու հետագա կորը (L-1 դիտարկելի շուկա)	1,631	1,482
Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ 10 տարվա համար	1.91%	2.74%
3-ամսյա LIBOR տոկոսադրույք	1.92%	2.83%
Ապրանքային գների ինֆլատոր (հրապարակված ֆորվարդային կոր)	2.21%	2.78%
Ոսկու ակնկալվող տատանումներ	10.79%	13.31%

Արտադրանքի վաճառքի պարտավորության և արտադրանքի վաճառքի գծով կանխավճարների օպցիոնի սկզբնական իրական արժեքը հաշվարկվել է հանքարդյունահանող ընկերությունների փոխկապակցված սպուտային ոսկու, սպուտային արծաթի և նմանատիպ պարտքի եկամտաբերության՝ Մոնտե Կառլո սիմուլյացիոն մեթոդի հիման վրա: Ղեկավարությունը կարծում է, որ ավելի քան հավանական է, որ արտադրանքի վաճառքի գծով փոփոխված և վերաներկայացված համաձայնագրի երրորդ կանխավճարը կկատարվի գնորդների կողմից, և

այդ պատճառով արտադրանքի վաճառքի գծով կանխավճարն ունի նոմինալ արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վաճառքի պայմանագիրը գնահատվել է՝ օգտագործելով Բլեք-Շոուլսի մեթոդը: Օգտագործված հիմնական ելակետային տվյալները ներառում են ոսկու գինը, տատանումները և ցիկլային ժամանակաշրջանը:

Արտադրանքի վաճառքի հետ կապված մարումը մոդելավորվում է որպես սվոպ: Թողարկման պահին սվոպի իրական արժեքը զրո է, որովհետև իրացման գինը հավասար է շուկայական գնին: Շուկայական գնի փոփոխման հետ մեկտեղ կփոխվեն արտադրանքի վաճառքի մարման ածանցյալ գործիքների արժեքները: Հիմնական ելակետային տվյալը ոսկու գինն է:

Պայմանագրի հետ կապված ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով՝ պարբերական սկզբունքով: Որպես այդպիսին, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են իրական արժեքով, ինչպես ցույց է տրված վերը նշված աղյուսակում:

12 Կապակցված կողմերից փոխառություններ, զուտ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերին	49,685	47,622
Կապակցված կողմերից փոխառություններ	140,525	151,501
	190,210	199,123

Համաձայն Ընկերության և «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի միջև կնքված պայմանագրի, Ընկերությունը Ամուսարի նախագծի շրջանակներում ստացել է մանրամասն ճարտարագիտական դիզայնի, խորհրդատվական ծառայություններ շինարարության համար և կրել հետաձգված ֆինանսական ծախսումներ: Ծառայությունների վճարման պայմանները կորոշվեն ժամանակացույցով, որը կհամաձայնեցվի Ընկերության և «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի հետ, Ընկերության կողմից առաջին հանքարդյունահանման արտադրանքի վաճառքին հաջորդող երրորդ տարում: Համաձայն Ընկերության և Լիդիան ԱՄՆ Կորպորացիայի միջև կնքված պայմանագրի, Ընկերությունը ստացել է ծառայություններ, որոնց գծով կառավարման վճարը հաշվեգրվում է եռամսյակային կտրվածքով: Կապակցված կողմերին վճարման ենթակա կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Կրեդիտորական պարտքերն արտահայտվում են ԱՄՆ դոլարով:

Կապակցված կողմերից ստացված փոխառություններն իրենից ներկայացնում են գլխավոր մայր ընկերությունից՝ «Լիդիան Ինթերնեյշնլ» Լիմիթիդից, ստացված չափափակված անտոկոս փոխառություններ: Փոխառությունները ենթակա են մարման փոխատուի պահանջի հիման վրա:

13 Պահուստներ

Ընթացիկ- Պայմանագրի փակման դրությամբ

2019թ. նոյեմբերին Ընկերությունը հաշտության համաձայնագիր է կնքել Զերմուկում աշխատողների համար վարձակալած տարածքի գծով իր երկարաժամկետ պայմանագիրը լուծելու համար: Համաձայնագիրը նախատեսում էր 0,2 միլիոն դոլարի չափով անհապաղ վճարում և 2020 թվականի հունիսի 30-ին փակման վերջնական վճարում՝ 1,3 միլիոն դոլարի չափով:

Ոչ ընթացիկ- Վերականգնման պարտավորություններ

Վերականգնման պարտավորություններն իրենցից ներկայացնում են տնտեսական օգուտների ակնկալվող ապագա արտահոսքի ներկա արժեքը, որոնք կպահանջվեն Ամուլսարի վերականգնման աշխատանքների համար: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչված պարտավորությունները վերաբերում են միայն Ամուլսարի հանքի այն մոտակա տարածքների վերականգնմանը, որոնք վնասվել են հետազոտական և մշակման աշխատանքներից:

	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	8,137	8,086
Գնահատման փոփոխություն	(3,301)	-
Գնաճի մակարդակի փոփոխություն	(1,272)	-
Զեղչման աճ և հակադարձում	716	667
Դրամական միջոցների հոսքերի փոփոխություն	(1,161)	(619)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	61	3
Տարեվերջի մնացորդ	3,180	8,137

Յուրաքանչյուր տարվա վերջում Ընկերությունը վերանայում է շրջակա միջավայրի պարտավորությունների գնահատման ժամանակ օգտագործվող ծախսային գնահատումներն ու ենթադրությունները: Այս ծախսային գնահատումների և ենթադրությունների փոփոխությունները համապատասխան ազդեցություն ունեն պարտավորության հաշվեկշռային արժեքի վրա: Հիմնական գործոնները, որոնք կարող են հանգեցնել ակնկալվող ապագա դրամական հոսքերի փոփոխությանը, դրանք պաշարների գնահատումների և հանքի գործունեության կենսական ցիկլի, և շրջակա միջավայրի պաշտպանությունը կարգավորող օրենքների և նորմատիվ ակտերի էական փոփոխություններն են: Շրջակա միջավայրի հետ կապված պարտավորությունները, որպես տեղանքի վերականգնման և հանքի փակման ծախսումների գծով պարտավորություններ, ներկայացնում են Ամուլսարի համար վերականգնման ծախսերի ներկա արժեքը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը թարմացրել է Ամուլսարի տեղանքի վերականգնման և հանքի փակման ծախսումների գծով պարտավորությունները: Թարմացված տեղեկատվությունը պատրաստվել է ղեկավարության և երրորդ կողմերի գնահատականների հիման վրա: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնաճի համար ճշգրտված ծախսերի չզեղչված ընդհանուր արժեքը կազմում է 11.7 մլն ԱՄՆ դոլար: Կարևոր ենթադրությունները ներառում են ակնկալվող ծախսերը, որոնք պետք է իրականացվեն մինչև 2038թ., այդ ծախսումների ժամկետները, գնաճի 2,5% միջին մակարդակը և 9,0% զեղչման տոկոսադրույքը: Գնահատումները հիմնված են Հայաստանում գնաճի մակարդակի և ՀՀ Կենտրոնական բանկի գանձապետական պարտատոմսերի դրույքաչափերի վրա: Տես ծանոթագրություն 8՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը վերականգնման աշխատանքների գծով վճարման ենթակա կանխավճարների համար:

14 Վարձակալության գծով պարտավորություն

	2019թ.	2018թ.
Մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	-	-
ՖՀՄՍ 16-ի ընդունման ավելացումներ	259	-
Վարձակալության գծով պարտավորություն	(119)	-
Ամորտիզացիա	35	-
Արտարժույթի փոխարկում	2	-
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	177	-
	-	-
Որից :		
Ոչ ընթացիկ մաս	67	-
Ընթացիկ մաս	110	-
Ընդամենը	177	-

Այդ պարտավորությունները գնահատվել են մնացորդային վարձավճարների ներկա արժեքով, որոնք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գեղջվել են Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով՝ 17%: ՖՀՄՍ 16-ի համաձայն, յուրաքանչյուր վարձակալության վճար բաշխվում է վարձակալության գծով պարտավորությունների և ֆինանսական ծախսերի միջև: Ֆինանսական ծախսերը կամ վարձակալության գծով պարտավորության գեղջման մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

2019թ. հունվարի 1-ին վարձակալության գծով պարտավորությունը հաշվարկելիս Ընկերությունը հաշվի է առել հետագա վարձակալության վճարների զուտ ներկա արժեքը:

- Հաստատուն վճարները՝ հանած վարձակալության գծով ստացվելիք ցանկացած խրախուսումներ,
- Փոփոխական վարձավճարները, որոնք հիմնված են ցուցանիշի կամ տոկոսադրույքի վրա,
- Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներ՝ մնացորդային արժեքի երաշխիքներով,
- Գնման օպցիոնի կատարման գինը, եթե Ընկերությունը բավականին համոզված է, որ այդ օպցիոնը կիրագործվի,
- Այն դեպքերում, երբ վարձակալությունը պարունակում է երկարաձգման տարբերակ, երկարաձգման ժամանակահատվածի վարձավճարները ներառվում են վարձակալության պարտավորության հաշվարկում, եթե Ընկերությունը բավականին համոզված է եղել, որ այն կօգտագործի այդ տարբերակը,
- Վարձակալության պայմանագիրը լուծելու համար տուգանքների վճարումը, եթե վարձակալության պայմաններն արտացոլում են Ընկերության կողմից այդ տարբերակի իրագործումը:

ՖՀՄՍ 16 ընդունումից հետո ոչ մի ճշգրտումներ չեն պահանջվել ֆինանսական վարձակալության գծով, քանի որ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ նախկինում որպես այդպիսին դասակարգված վարձակալության պայմանագիր:

ՖՀՄՍ 16-ի ընդունման դեպքում, 2019թ. հունվարի 1-ից օգտագործման իրավունքով ակտիվները չափվել են վարձակալության պարտավորությանը հավասար չափով և ճշգրտվել են վարձակալության ավանդների և հաշվեգրված վարձավճարների չափով:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 0,4 միլիոն ԱՄՆ դոլար: Վարձակալության գծով

պարտավորությունների ընթացիկ մասը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ կրեդիտորական պարտքեր և այլ ընթացիկ պարտավորություններ տողում: Վարձակալության պարտավորությունների գծով տոկոսային ծախսերը ներկայումս ներառվում են շրջափակման հետ կապված ծախսերում և այլ զուտ ծախս/ եկամուտ հոդվածում, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Վարձակալության պարտավորությունների գծով տոկոսների և մայր գումարի մասնաբաժինների դրամական վճարները արտացոլվում են որպես ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Մինչև 2018թ. ավարտը գործառնական վարձակալության գծով վճարները արտացոլվել են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ գծային մեթոդով՝ վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ուստի գործառնական վարձակալության գծով վճարներն ամբողջությամբ ներառվում են մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկներում: ՖՀՄՍ 16-ի ընդունումից հետո միայն օգտագործման իրավունքով ակտիվների գծով մաշվածության ծախսը և վարձակալության պարտավորությունների գծով տոկոսային ծախսն են արտացոլվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում և ներառվում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկներում: Չնայած ՖՀՄՍ 16-ի կիրառման արդյունքում առաջացող այս հաշվապահական հաշվառման տարբերություններին, ՖՀՄՍ 16-ի ընդունումն ազդեցություն չի ունեցել Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի վրա:

Կարճաժամկետ վարձակալության գծով վճարները և փոքրարժեք ակտիվի վարձակալության վճարները չեն ներառվում վարձակալության պարտավորությունների չափման մեջ և չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Այս վճարումները արտացոլվում են ընդհանուր և վարչական ծախսերում կամ շրջափակման հետ կապված ծախսերում, կախված վարձակալությունից, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության «գործառնական գործունեություն» բաժնում:

Կիրառվող գործնական մեթոդներ

ՖՀՄՍ 16-ի առաջին կիրառման դեպքում Ընկերությունը հաշվի է առել ստանդարտով թույլատրված հետևյալ գործնական մեթոդները՝

- Վարձակալության պայմանագրի համար գեղջման միասնական դրույքաչափի օգտագործումը միանման հատկանիշներով,
- 12 ամսից պակաս ժամկետով գործառնական վարձակալության հաշվառումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ որպես կարճաժամկետ վարձակալության,
- Ցածրարժեք վարձակալության բացառումը (այսինքն՝ 5,000 ԱՄՆ դոլարից պակաս արժեքով),
- Սկզբնական օգտագործման ամսաթվի դրությամբ օգտագործման իրավունքով ակտիվի չափման համար կիրառվող սկզբնական ուղղակի ծախսերի բացառումը,
- Վարձակալության ժամկետը սահմանելու համար հետադարձ մոտեցման կիրառումը, երբ պայմանագիրը պարունակում է վարձակալության երկարաձգման կամ դադարեցման տարբերակներ:

Ընկերությունն ընտրել է ՖՀՄՍ 16-ը չկիրառելու մոտեցումը՝ այն պայմանագրերի մասով, որոնք չեն պարունակում վարձակալություն՝ համաձայն ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի՝ «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարության կողմից արված էական դատողությունները, գնահատումները և ենթադրությունները, մասնավորապես ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի հետ կապված, հիմնականում ներառում են յուրաքանչյուր վարձակալության կամ վարձակալված ակտիվների խմբի զեղչման համար կիրառվող համապատասխան զեղչման տոկոսադրույքը, ինչպես նաև վարձակալության ժամկետի որոշումը, երբ վարձակալությունը պարունակում է երկարաձգման տարբերակ, և գնահատում է, թե արդյոք Շնկերությունը բավականաչափ համոզված է, որ կկիրառի երկարաձգման տարբերակը:

Այս երկու գործոնների համար էական դատողությունները, գնահատումները և ենթադրությունները ազդեցություն կունենան այս վարձակալության գծով պարտավորությունների ներկա արժեքի վրա, ինչպես նաև օգտագործման իրավունքով ակտիվի համապատասխան արժեքի վրա ՖՀՄՍ 16 կիրառման դեպքում:

Ստորև ներկայացված աղյուսակում վերլուծված են Շնկերության վարձակալության գծով պարտավորությունները համապատասխան պայմանագրային մարման ժամկետների խմբավորմամբ՝ հիմնվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ մնացորդային ժամանակահատվածից մինչև վարձակալության պայմանագրային մարման ժամանակահատվածը: Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված գումարները վարձակալության գծով պարտավորությունների պայմանագրային չզեղչված դրամական հոսքեր են:

	Մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 1 տարի	1 տարուց մինչև 2 տարի	2 տարուց մինչև 5 տարի	Ընդամենը պայմանագրա- յին դրամական հոսքեր	Հաշվեկշռա- յին արժեք
Վարձակալության պարտավորություն	65	65	62	-	192	177

Վարձակալական վճարների հետ կապված պայմանագրային չզեղչված դրամական հոսքերի ընդհանուր գումարի և վարձակալության պարտավորության հաշվեկշռային արժեքի տարբերությունը հանդիսանում է վարձակալության պարտավորության հետ կապված զեղչ:

15 Կապիտալ և պահուստներ

15.1 Բաժնետիրական կապիտալ

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի: 208 ԱՄՆ դոլար արժեքով կանոնադրական կապիտալը չի արտացոլվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ հաշվեկշռային մնացորդները մինչև մոտակա հազար ԱՄՆ դոլարը կլորացնելու պատճառով:

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 5,000 դրամ	20	20

15.2 Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է մայր ընկերությունից ստացված փոխառությունների իրական արժեքի և պայմանագրային արժեքի միջև տարբերությունը:

16 Շրջափակման հետ կապված ծախսեր

2018 թվականի մայիսին ՀՀ կառավարության կազմում փոփոխությունից հետո ամբողջ երկրում պարբերաբար տեղի են ունեցել ցույցեր և ճանապարհային շրջափակումներ: Այդ բոլորի ակցիաներն առաջին հերթին ուղղված էին հանքարդյունաբերության ոլորտին, այդ թվում՝ Ամուլսարի ոսկու նախագծին: Մուտքն Ամուլսար արգելափակվել է 2018թ. հունիսից:

2019թ.-ի և 2018թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում շրջափակման հետ կապված ծախսերը ներառում էին հետևյալը:

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Տոկոսային և ֆինանսավորման ծախսեր	53,598	21,367
Մաշվածություն	6,938	3,700
Այլ	5,810	4,646
Աշխատանքային ծախսերը	3,980	7,916
Իրավական և խորհրդատվական ծառայություններ	1,242	1,148
Սարքավորումների դուրս հանման և ձմռան նախապատրաստման ծախսեր	819	1,154
	72,387	39,931

17 Մշակման ակտիվների, հիմնական միջոցների արժեզրկում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն, ոչ ընթացիկ ակտիվները, ներառյալ Ամուլսարի մշակման ակտիվները, վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման հայտանիշներ: Արժեզրկումը ճանաչվում է այն դեպքում, երբ հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

2019թ. դեկտեմբերի 31-ին Ընկերությունը որոշեց, որ Ամուլսարի մշակման ակտիվի փոխհատուցվող գումարը պակաս է հաշվեկշռային արժեքից: Արժեզրկման նպատակով

Ընկերությունն առանձին է գնահատել վաճառքի ենթակա էական հիմնական միջոցները, հանքավայրը և հանքի ճամբարը: Ընկերությունը կարծում է, որ ՔԵԹ ժամկետային վարկի արժեքը մոտենում է ծանրաքաշ տրանսպորտային միջոցների և Կատերպիլարի կողմից արտադրված հանքարդյունահանման սարքավորումների վերականգնվող արժեքին՝ 26.0 միլիոն ԱՄՆ դոլար: Բացի այդ, Ընկերությունը կարծում է, որ հանքի ճամբարի վերականգնվող արժեքը կազմում է 1.7 միլիոն ԱՄՆ դոլար:

Մնացած մշակման ակտիվների վերականգնվող արժեքը որոշվում է որպես իրական արժեքից՝ հանած օտարման ծախսերը՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մոդելը, և որպես այդպիսին Ընկերությունը ճանաչել է արժեզրկումից հավելյալ վնաս՝ 297.5 միլիոն ԱՄՆ դոլար :

Ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մոդելը ներառում է ղեկավարության գնահատումները՝ ապագա դրամական միջոցների հոսքերի ժամկետների վերաբերյալ: Հիմնական ենթադրությունները ներառում են նախնական կապիտալ ծախսումները, ապագա գործառնական ծախսերը, ապագա կայունացնող կապիտալ ծախսումները, վերականգնվող պահուստները, ապագա արտադրության ժամկետները՝ զեղչված համապատասխան տոկոսադրույքով: Արժեզրկումից լրացուցիչ վնասի առաջացման հիմնական պատճառ է հանդիսացել առևտրային արտադրության մեկնարկի ամսաթվի լրացուցիչ ուշացումը, համեմատած 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող ամսաթվի հետ, որն առաջացել է ծանոթագրություն 1-ում նկարագրված իրադարձությունների արդյունքում:

Արժեզրկման ստուգման հիմնական գնահատումները ներառում են՝

- Զեղչման տոկոսադրույք՝ 18%
- Ոսկու արժեք՝ 1,400 ԱՄՆ դոլար

18 Այլ ծախսեր, զուտ

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կառավարման վճարներ	346	1,134
Ակտիվի հաշվեկշռային արժեքի դուրսգրում	-	671
Մշակման ակտիվների օտարում	90	-
Հետաձգված ֆինանսավորման ծախսումների դուրսգրում	-	682
Արտաբժույթի փոխարժեքից (օգուտ)/վնաս	(117)	65
Այլ	(86)	343
	<u>233</u>	<u>2,895</u>

19 Շահութահարկ

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում հաշվառել է ընթացիկ շահութահարկի գծով զրոյական ծախս: Շահութահարկի գծով ծախսը տարբերվում է գործող դրույքաչափով հաշվարկվածից հետևյալ կերպ՝

2019թ. դեկտեմբերի 31-ին	2018թ. դեկտեմբերի 31-ին
-------------------------------	-------------------------------

	ավարտված տարի	ավարտված տար
Տարվա հաշվապահական հաշվառում (վնաս)	(366,479)	(127,060)
Կիրառելի դրույքաչափ	20%	20%
Շահութահարկի գծով ծախս (օգուտ)՝ սահմանված դրույքաչափով	(73,296)	(27,217)
Աճ (նվազում)՝		
Հարկերից ազատված և չնվազեցվող միավորներ	7,946	4,756
Հետաձգված հարկային ակտիվների փոփոխություն	65,350	22,460
Այլ մշտական տարբերություններ	-	1
Շահութահարկի գծով ծախս	-	-

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչել հետաձգված հարկեր՝ հետևյալ նվազեցվող (հարկվող) ժամանակավոր տարբերություններից և զուտ հարկային վնասի հաջորդ ժամանակաշրջան տեղափոխման ենթակա գումարներից՝

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Զուտ հարկային վնաս	20,700
Մշակման ակտիվներ, հիմնական միջոցներ	303,984
Այլ	2,066
Ընդամենը գումար որոնց գծով հետաձգված հարկերը չեն ճանաչվել	326,750

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխման ենթակա հարկային վնասը գնահատել է 12 մլրդ դրամ, որի գործողության ժամկետը լրանում է 2020-2024թթ: Ղեկավարությունը հավատացած է, որ կա բավարար անորոշություն հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխման ենթակա զուտ հարկային վնասից առաջացող հետաձգված հարկային ակտիվների իրացման նկատմամբ, ինչի արդյունքում այդ ակտիվները չեն ճանաչվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Չճանաչված հարկային օգուտներն արտացոլում են ղեկավարության գնահատականը՝ ապագայում այս հարկային ակտիվների իրացման, և հետագա շահույթի և հարկվող եկամտի գնահատման վերաբերյալ՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության ֆինանսական գործիքները բաղկացած են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, սահմանափակ դրամական միջոցներից, այլ դեբիտորական պարտքից, վերականգնման կանխավճարից, կրեդիտորական պարտքից, հաշվեգրված պարտավորություններից, պարտքային պարտավորություններից և ածանցյալ ֆինանսական գործիքներից: Ընկերության գնահատականներով, այդ հոդվածների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին 2019 թվականի դեկտեմբերի 31-ի և 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Տնօրենների խորհուրդը ընդհանուր պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և վերահսկողության համար: Ընկերությունը կառավարում է իր ֆինանսական ռիսկերի ենթարկվածությունը՝ իր գործունեությունը իրականացնելով այնպես, որպեսզի այն նվազագույնի հասցնի այնքանով, որքանով դա

գործնականում իրագործելի է: Ստորև բերված են Ընկերության գործունեության վրա ազդող հիմնական ֆինանսական ռիսկերը:

Կապիտալի կառավարում

«Ամուլսար Ոսկու Հանք» Ծրագիրը դեռևս չի հասել արտադրական փուլ, քանի որ Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ անօրինական շրջափակումների դեմ ուղղված քայլերի ձախողման արդյունքում Ընկերությունը չկարողացավ ավարտին հասցնել հանքի շինարարությունը: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 10-ում՝ 2019թ. դեկտեմբերի 20-ին Ընկերությունը չի կարողացել համաձայնության գալ իր բոլոր պարտավորությունը՝ պահանջը ներել կամ գործի դնել կամ դեֆոլտի որոշակի իրադարձությունների դեպքում յուրաքանչյուր վարկատուի ֆինանսական համաձայնագրի շրջանակներում կիրառել դեֆոլտի դեպքում իրենց վերապահված իրավունքները կամ զիջումները, ավարտվել է: Լիդիանը 2019թ. դեկտեմբերի 23-ին դիմել է CCAA-ի պաշտպանությանը: Ընկերությունը կգործի դատարանի պաշտպանության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ գործողության սահմանված ընթացքը հաստատված չէ իր վարկատուների և վերահսկող դատարանի կողմից: Հետագայում կասեցվել է «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ»-ի սովորական բաժնետոմսերի առքուվաճառքը, և սկսվել է Տորոնտոյի ֆոնդային բորսայի կողմից ապացուցական վերանայում: Այս վերանայման արդյունքում 2020թ. փետրվարի 5-ին Տորոնտոյի ֆոնդային բորսան որոշեց ապացուցակել Լիդիան-ի սովորական բաժնետոմսերը: Արդյունքում Ընկերությունը չկարողացավ ներգրավել լրացուցիչ կապիտալ, որն անհրաժեշտ է իր գործունեությունը շարունակելու համար: Ընկերությունը կարող է փորձել իր վրա վերցնել լրացուցիչ պարտավորություններ այնքան ժամանակ, քանի դեռ չի ստեղծվել ռազմավարական այլընտրանք կամ չի իրականացվել ակտիվների օտարումը:

Կապիտալը բաղկացած է սեփականատերերին հասանելիք համախառն սեփական կապիտալի, կրեդիտորական պարտքերի և հաշվեգրված պարտավորությունների, արտադրանքի վաճառքի գծով պարտավորությունների և փոխառությունների հանրագումարից: 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմել է համապատասխանաբար (532,4) միլիոն ԱՄՆ դոլար և (165,9) միլիոն ԱՄՆ դոլար: Կրեդիտորական պարտքերը և հաշվեգրված պարտավորությունները կազմել են համապատասխանաբար 14,1 միլիոն ԱՄՆ դոլար և 3,0 միլիոն ԱՄՆ դոլար: Արտադրանքի վաճառքի գծով պարտավորությունները՝ հանած չամորտիզացված պարտքային թողարկման ծախսերը կազմել են համապատասխանաբար 354,4 միլիոն ԱՄՆ դոլար և 297,0 միլիոն ԱՄՆ դոլար:

Ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի՝ շուկայական ռիսկի (ներառյալ արտարժույթային ռիսկը, տոկոսադրույքային ռիսկը և հումքի գների ռիսկը), պարտքային ռիսկի և իրացվելիության ռիսկի, որն առաջանում է ֆինանսական գործիքների օգտագործումից: Սույն ծանոթագրությունում ներկայացված է Ընկերության կողմից այդ ռիսկերից յուրաքանչյուրին ենթարկվածության մասով տեղեկատվություն:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը այն ռիսկն է, որ փոփոխում է շուկայական գործոնները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները կամ հումքի գները և ազդում է ընկերության ֆինանսական գործիքների արժեքի վրա:

ա) Արտարժույթային ռիսկ - Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի

փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Ընկերության գործառնական արժույթն ԱՄՆ դոլարն է, իսկ հիմնական գործունեությունն իրականացվում է Հայաստանում:

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները մեծամասամբ պահվում են ԱՄՆ դոլարով, ՀՀ դրամով, Կանադական դոլարով և եվրոյով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է զգայունության վերլուծությունը, որը ցույց է տալիս զուտ եկամտի վրա ազդեցությունը, երբ ԱՄՆ դոլարի 10%-ով արժևորումը համապատասխան արժույթի նկատմամբ կհանգեցնի արտարժույթի փոխարկման կորստի: Եթե ԱՄՆ դոլարը արժեզրկվի համապատասխան արժույթի նկատմամբ, ապա զուտ շահույթի վրա կլինի հակառակ ազդեցությունը:

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամ	(129)	(1,224)
Կանադական դոլար	51	(87)
	(78)	(1,311)

Ընկերությունը վարում է արժույթի ռիսկի քաղաքականություն, համաձայն որի դրամական միջոցները հիմնականում պահում է ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով, Կանադական դոլարով և եվրոյով պահվող դրամական միջոցները մոտավորապես համապատասխանում են հաջորդ եռամսյակում ակնկալվող ապագա ծախսումներին:

բ) Տոկոսադրույքի ռիսկ - Տոկոսադրույքի ռիսկն այն ազդեցությունն է, որ տոկոսադրույթի փոփոխությունները կարող են ունենալ Ընկերության շահույթի և ակտիվների վրա: Տոկոսադրույքի ռիսկի տատանումների ազդեցությունը պայմանավորված է հիմնականում երկարաժամկետ պարտքով, որի տոկոսադրույքները հիմնված են LIBOR-ի վրա: Ընկերությունը LIBOR տոկոսադրույքի անբարենպաստ փոփոխությունների հեջավորում կատարելու որևէ պայմանագիր չի կնքել: Ընկերությունն անընդհատ հիմունքով գնահատում է երկարաժամկետ պարտքի վրա տոկոսադրույքի ազդեցությունը հեջավորելու հնարավորությունները:

Ժամկետային վարկերի կանխավճարների գծով տոկոսադրույքը կազմում է LIBOR+6.5% (առնվազն 1%) և Ամերիաբանկի վարկային պայմանագրի կանխավճարների գծով տոկոսադրույքը կազմում է LIBOR+8.75%: ԻՆԳ Ժամկետային վարկի կանխավճարների գծով տոկոսադրույքը կազմում է LIBOR+2.95%, իսկ ԲԵԹ Ժամկետային վարկի կանխավճարների գծով տոկոսադրույքը կազմում է LIBOR+4.5%: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը որոշ վարկերի գծով չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 10-ում՝ 2019թ. հոկտեմբերի 14-ին կնքված Փոփոխված և վերաներկայացված տարկետման չորրորդ համաձայնագրի գործողության ժամկետը լրացել է 2019թ. դեկտեմբերի 20-ին: 2019թ. դեկտեմբերի 21-ից սկսած բոլոր փոխառությունների համար կիրառելի են անհատական վարկային պայմանագրերում նշված դիֆոլտային տոկոսադրույքները:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխառությունների տոկոսադրույքի 1% փոփոխման նկատմամբ զգայունությունը այլ փոփոխականների հաստատուն մնալու պարագայում կազդի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա 3.3 միլիոն ԱՄՆ դոլարի չափով 2019թ. համար և 2.9 միլիոն ԱՄՆ դոլարի չափով 2018թ. համար:

Ընկերությունը դրամական միջոցներ է ավանդադրել ամբողջությամբ իրացվելի բանկային հաշիվներում: Դրամական միջոցների, դրանց համարժեքների և սահմանափակ դրամական

միջոցների վրա տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը Ընկերությունը գնահատում է ոչ նշանակալի 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Արտադրանքի գների ռիսկ

Ընկերությունը ենթակա է արտադրանքի գների ռիսկի՝ ոսկու և արծաթի շուկայական գների տատանմանը: Արտադրանքի գների ռիսկերի վրա ազդեցություն են գործում տարբեր գործոններ, որոնք գտնվում են Ընկերության վերահսկողությունից դուրս՝ ներառյալ համաշխարհային կամ տարածաշրջանային սպառողական նորմերը, մետաղների պահանջարկը և առաջարկը, սպեկուլյատիվ գործունեությունը, փոխարինող մետաղների հասանելիությունն ու արժեքը, գնաճը և քաղաքական ու տնտեսական պայմանները: Երաշխիք չկա այն, որ Ընկերության կողմից արտադրված ոսկու և արծաթի համար շահութաբեր շուկա գոյություն կունենա:

Արտադրանքի գների ռիսկի ազդեցությանը ենթարկված ֆինանսական գործիքները Արտադրանքի վաճառքի պայմանագրի և Վաճառքի պայմանագրի հետ կապված պարունակվող ածանցյալ գործիքներն են: Տես ծանոթագրություն 11:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրերով շրջանակներում ոսկու և արծաթի ունեցիաներ չեն մատակարարվել: Տես ծանոթագրություն 11, պարունակվող ածանցյալ գործիքների վրա ոսկու և արծաթի գների 10% աճի կամ նվազման ազդեցության համար:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերոջ կողմից իր պարտականությունների չկատարումը կարող է նվազեցնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ օգտագործման մեջ գտնվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող ապագա դրամական ներհոսքերը: Ընկերության պարտքային ռիսկն առաջին հերթին իրացվելի ֆինանսական ակտիվներն են, ներառյալ դրամական միջոցները և սահմանափակ դրամական միջոցները: Ընկերության դրամական միջոցները կենտրոնացված են կանադական խոշոր բանկում, այնուամենայնիվ ղեկավարությունը գտնում է, որ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով իր պարտքային ռիսկը սահմանափակ է, քանի որ գործընկերները միջազգային վարկանշային գործակալությունների կողմից բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններ են:

Քանի որ Ընկերությունը չունի հասույթ կամ առևտրային դեբիտորական պարտքեր, ղեկավարությունը պարտքային ռիսկը գնահատում է ցածր: Կանխավճարներ տրվում են խոշոր մատակարարներին, հիմնականում տեղական շինարարական ընկերություններին Ամուսար ծրագրի մշակմամբ զբաղվելու համար: Այս կանխավճարների կատարումը դիտարկվում է ղեկավարության կողմից ըստ առանձին դեպքերի: ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքերը և վերականգնման գծով կանխավճարներ տրված են Հայաստանի Հանրապետության Կառավարությանը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ստացել է փոխհատուցելի ԱԱՀ-ի գծով բոլոր բոլոր գումարները, բացի 4.2 միլիոն ԱՄՆ դոլարից: Փոխհատուցվող ԱԱՀ-ի մնացորդային մասն ակնկալվում է, որ կստացվի ապագա ժամանակաշրջանում:

Ստորել բերված աղյուսակում ներկայացված են Ընկերության մնացորդները

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տար
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր	4,163	33,806
Ավանդի սահմանափակումներ	1,348	1,532
Կանխավճարներ կապալառուներին	1,058	80
	6,569	35,418

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում ֆինանսական ակտիվների համար չեն պահանջվել էական արժեզրկման պահուստներ: Ընկերությունը չունի ժամկետանց էական ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է Ընկերության առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի ունենա բավարար միջոցներ՝ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Ընկերության իրացվելիության վրա բացասական ազդեցություն է ունեցել կապիտալի և փոխառությունների շուկաների անհասանելի դառնալը: 2017թ. ընթացքում և մինչև 2018թ. հոկտեմբեր Ընկերությունը հիմնվել է բաժնետերերի, արտադրանքի վաճառքից կանխավճարների և պարտքի ֆինանսավորման վրա՝ իր գործունեությունը և «Ամուլսար Ոսկու Հանք» Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով: Անօրինական շրջափակման պատճառով Ընկերությունը չի կարողացել մուտք գործել Ամուլսարի ոսկու հանքավայր՝ սկսած 2018թ. հունիս ամսից և, որպես այդպիսին, շինարարական աշխատանքները կասեցվել են, և առկա վարկային պայմանագրերի գծով կանխավճարների հասանելիությունը սահմանափակվել: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը որոշ վարկերի գծով չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները, և արդյունքում չկա որևէ երաշխիք, որ Ընկերությունը կկարողանա մարել իր փոխառությունները և այլ երկարաժամկետ պարտավորությունները:

Ընկերությունն իր պարտավորությունների կատարման համար այլ աղբյուրներից լրացուցիչ միջոցների ներգրավման կարիք ունի: Երաշխիք չկա առ այն, որ Ընկերությունը կկարողանա ներգրավել ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, ուստի, իրացվելիության ռիսկն առկա կլինի մինչև այն պահը, երբ կներգրավվի լրացուցիչ ֆինանսավորում:

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են ամբողջությամբ իրացվելի բանկային հաշիվներում, որոնք հասանելի են Ընկերության կողմից ցպահանջ:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը, հաշվեզրված պարտավորությունները, արտադրանքի վաճառքի գծով պարտավորությունները, պարտքերը և վերականգնման պահուստը: Արտադրանքի վաճառքի գծով պարտավորությունը բաղկացած է ոսկու և արծաթի սահմանված քանակի վաճառքի պարտավորությունից (զտված ոսկու ընդհանուր արտադրության 6.75% միջինում մինչև 142,454 ունցիա և զտված արծաթի ընդհանուր արտադրության 100% միջինում մինչև 694,549 ունցիա) գնահատված 10 տարիների ընթացքում: Տե՛ս ծանոթագրություն 10:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ապրանքների ձեռքբերման, ժամկետային վարկի և սարքավորումների ֆինանսավորման որոշ վարկային պայմանների գծով չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Այսպիսով, այս վարկերի գծով պայմանագրային պարտավորությունները ենթակա են մարման մեկ տարվա ընթացքում: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարման ժամանակացույցը հետևյալն է.

Հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը	Մինչև 1 տարի	1-5 տարի	5 Տարի Անց
Պարտք	354,378	354,378	-	-
Հողի վարձակալություն	11,277	932	3,565	6,780
Վերականգնում	3,180	-	-	3,180
Վարձակալության պարտավորություններ (ներառյալ տոկոսները)	192	130	62	-
	369,027	355,440	3,627	9,960

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Իրական արժեքի հիերարխիան ըստ առաջնահերթության հաշվի է առնում գնահատման հնարքների ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են իրական արժեքը չափելու նպատակով: Հիերարխիան առաջնությունը տալիս է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվների և պարտավորությունների (չափման 1-ին մակարդակ) համար չճշգրտված գնանշված գներին, իսկ ամենաքիչ առաջնությունը տալիս է ոչ դիտարկելի ելակետային տվյալներին (չափման 3-րդ մակարակ): Տես ծանոթագրություն 11:

21 Պարտավորվածություններ

Կառուցման պայմանագրեր

Ընկերությունը կնքել է տարբեր պայմանագրեր Ամուլսարի հետ կապված սարքավորումների գնման և մատակարարման, շինարարության և այլ ծառայությունների վերաբերյալ: Շրջափակման պատճառով կապալառուների հետ բոլոր շինարարական պայմանագրերը դադարեցվել կամ կասեցվել են:

Վարձակալություն

Հողի գծով վարձակալություն

Ընկերությունն ունի հողօգտագործման մի շարք պայմանագրեր՝ կապված իր Ամուլսարի ոսկու հանքի ծրագրում չվերականգնվող հանածոների հետ, որոնք դուրս են գալիս ՖՀՄՍ 16-ի՝ «Վարձակալություն», շրջանակներից: Պայմանագրերը կնքվել են երեք համայնքների հետ՝ Զադիթափ, Գորայք և Զերմուկ: Բոլոր պայմանագրերը կնքվում են կամ հանքի անմիջական հարևանությամբ, կամ լեռնային ապարների տեղակայման գոտու սահմաններում: Այդ հողերն անհրաժեշտ են Ամուլսարի վրա հետազոտման կամ արդյունահանման աշխատանքների իրականացման համար: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 11.3 միլիոն ԱՄՆ դոլարի հողօգտագործման պարտավորություններ, որոնցից 0.9 միլիոն ԱՄՆ դոլարն ունի մինչև մեկ տարի մարման ժամկետ, 3.6 միլիոն ԱՄՆ դոլարը՝ մեկից մինչև հինգ տարի մարման ժամկետ, և 6.8 միլիոն ԱՄՆ դոլարը՝ ավելի քան հինգ տարի մարման ժամկետ:

Ծրագրային ապահովման գծով վարձակալություն

Ընկերությունը վարձակալում է իր հաշվապահական հաշվառման ծրագիրը ծրագիրը որպես ծառայություն պայմանագրով, որը դուրս է ՖՀՄՍ 16՝ «Վարձակալություն», շրջանակից: Վարձակալության կազմում է տարեկան 0.04 միլիոն ԱՄՆ դոլար և ժամկետը լրանում է 2022թ. մարտին:

Վերականգնման աշխատանքների գծով վճարներ

2016թ. մայիսին Ընկերությունը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ փոփոխված հանքարդյունահանման համաձայնագիր է կնքել: Համաձայն համաձայնագրի՝ «Լիդիան Արմենիա» նախկինում Հայաստանի Հանրապետության Կառավարությանը վճարել է կանխավճար՝ որպես երաշխիք շրջակա միջավայրի հետահանքարդյունաբերական վերականգնման և ընթացիկ վերահսկողության համար: Վճարված գումարներն իրենցից ներկայացրել են պայմանագրային պարտավորությունների 15%-ը:

Վերականգնման երաշխիքային գումարի մնացած մասը կվճարվի հավասարաչափ՝ 121.9 միլիոն դրամի կամ 0.3 միլիոն ԱՄՆ դոլարի չափով սկսած 2016թ.-ից՝ տասներեք տարվա ընթացքում: Ի լրումն, Ընկերությունը հանքի փակումից հետո պարտավոր է տարեկան ներդնել 61.0 միլիոն դրամ կամ 0.12 միլիոն ԱՄՆ դոլար աշխատուժի սոցիալական համակերպման և 61.5 միլիոն դրամ կամ 0.13 միլիոն ԱՄՆ դոլար հարակից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար: Վերականգնման երաշխիքային գումարն Ընկերությանը կփոխհատուցվի հանքի փակումից հետո, երբ վերականգնման աշխատանքներն ավարտվեն և ընդունվեն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից: Տես ծանոթագրություն 8:

22 Պայմանականություններ

Պայմանական եռամսյակային վճար

2010թ. ապրիլի 23-ին Լիդիան Ինթերնեյշնլ-ը ձեռք բերեց Նյումոնթի բոլոր բաժնեմասերն իր համատեղ ձեռնարկությունում, որը ներառում էր Նյումոնթի բաժնեմասերը Ամուլսարի ոսկու հանքի նախագծում: Վարձատրության մի մասը ներառում էր 3% զուտ մնացորդային ռոյալթի (Net Smelter Right - NSR) : Սակայն, ինչպես նախատեսված է առքուվաճառքի պայմանագրում, 2018թ. ապրիլի 9-ին Լիդիան ընկերությունն օգտվեց 3% զուտ մնացորդային ռոյալթի լուծման իր օպցիայից և դրա փոխարեն ընտրեց եռամսյակային վճարման տարբերակը՝ Նյումոնթին 20,0 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով՝ առանց տոկոսների 20 հավասար եռամսյակային վճարումներով՝ յուրաքանչյուրը 1,0 միլիոն ԱՄՆ դոլար՝ առևտրային արտադրությունը սկսելուց հետո երրորդ օրացուցային ամսվա առաջին օրվանից: 2018թ. հուլիսի 3-ին Մավերիքս Մեթալը ձեռք է բերել NSR Նյումոնթից: Այդ հնարավոր վճարումները չեն համապատասխանում պարտավորության սահմանմանը, քանի որ նախաձեռնող իրադարձությունը տեղի չի ունեցել 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ուստի չեն արտացոլվել ֆինանսական հաշվետվություններում:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունները պատշաճ կերպով հաշվառվել են՝ ելնելով հարկային օրենսդրության իրենց մեկնաբանություններից: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը պատշաճ կերպով հաշվառել է շրջակա միջավայրի հետ կապված պարտավորությունները: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրին առնչվող օրենսդրությունը զարգացման փուլում է, և օրենսդրության հնարավոր փոփոխություններն ու դրանց մեկնաբանությունները կարող են ապագայում էական պարտավորություններ առաջացնել:

23 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Ֆինանսական հաշվետվությունների հաստատումը:

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ղեկավարության կողմից 2020թ. մարտի 4-ին, և հետագա իրադարձությունները վերանայվել են մինչև այդ ամսաթիվը:

2020թ. հունվարի 8-ին լրացել է Ամերիաբանկի ժամկետային վարկի գծով Ընկերության Տարկետման համաձայնագիրը: 2020 թվականի հունվարի 9-ին Ամերիաբանկը ստուգել է ընկերության դրամական հաշիվները, որպեսզի դրամական միջոցներ ուղղի Ամերիաբանկի ժամկետային վարկի մարման համար: Հետգանձված գումարն իր մեջ ներառում է 1.0 մլն ԱՄՆ դոլարի չափով սահմանափակ դրամական միջոցները և Ընկերության դրամական հաշիվներում առկա անվանական գումարը:

24 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, խմբի անդամ ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլոք, ինչպես նկարագրված է ստորև:

24.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «Լիդիան Ռեսուրս Արմենիա» Լիմիթիդ ընկերության կողմից, որին պատկանում են Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: Ընկերության գլխավոր մայր ընկերությունն է «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդը», որը գտնվում է Չանել Այլանդս, Սբ. Հելիի Զերսի ԶԵ2 4ՔԵ, Ֆրանսիս փողոց, 1-ին հարկ Բուրն Հաուս հասցեում և պատրաստում է հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայր ընկերություն		
Ստացված փոխառություններ / (Մարված փոխառություններ)	(10,145)	28,388
Ստացված ծառայություններ	887	1,398
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ստացված ծառայություններ	345	1,134
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և հատուցումներ	192	610